

ՄԱՀ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՆ ՄԱՍԷՅԵԱՆԻ

Շէքսպիրի հայ մեծ թարգմանիչն եւ պարսիկ դիւնազիտութեան անուանի հայ ներկայացուցիչը՝ Յովհաննէս Խան Մասէհեան վախճանած է:

1929ին նշանակուած էր Մասէհեան Խան Պարսկաստանի անդրանիկ դեսպանը Տոկիոյի արքունիքի քով: Երկու տարի հազիւ վարած պաշտօնս, տկարութեան պատճառաւ կը հարկադրուի ներկայացնել հրաժարականն իւր Պետութեան: Վերադարձի ճանապարհի վրայ, ի Խարբին, կը պատահի իրեն մահը, 19 Նոյեմբեր:

Յովհաննէս Մասէհեան ծնած է 23 Փետրուար 1864 ի Թեհրան: Իր մօրեղբոր՝ Ա. Խան Երուանդեանի ձեռնտուութեամբ կը մերձենայ պարսիկ բարձր շրջանակին. 1885ին կը կարգուի Թարգմանիչ պետական ծառայութեան մէջ. եւ իբրեւ այսպիսի կը վերածէ պարսկերէնի յիմնեակ մը եւրոպական անուանի վիպասանական գրուածներու: Ապա կը հրաւիրուի Թարգմանիչ պաշտօնով ընկերանալ պարսիկ դիւնազետներու Եւրոպական արքունիքներ. եւ այսպէս կը կոխէ դիւնազիտական ասպարէզ, մերթ իբրեւ Թարգման, մերթ իբրեւ Խորհրդատու եւ ներկայացուցիչ: 1912ին կը կարգուի Պարսիկ պետութեան Դեսպան ի Բերլին, 1928ին ի Լոնտոն եւ 1929ին ի Տոկիոյ:

Նաեւ ազգային հանրական, քաղաքական եւ դիւնազիտական ասպարէզներու վրայ եղած է Մասէհեան արդիւնատու:

Քայց հոս տեղն է վեր հանել Մասէհեանի խոր հմտութիւնը Շէքսպիրեան գրականութեան: Երկար տարիներ ապրած է նա նուիրուած Շէքսպիրի: Դեռ եւս 1894—1898 տարիներուն տուած էր հայերէն թարգմանութեամբ Շէքսպիրի Համշեալը, Ի՞նչպէս կ'ոգեք, Ռոմեօ եւ Զոլդիեա եւ Արքայ Լիր: Թէ՛ այս եւ թէ՛ նոյն հեղինակին գրուածներու ուրիշ հատորներ ի նորոյ թարգմանելով սկիզբ ըրաւ Շէքսպիրեան նոր շարքի մը, որ պիտի բովանդակէր 16 հատոր: Ընդարձակ ներածութիւն, ծանօթութիւններ, տպագրութեան շքեղութիւն կը կազմէին նոր շարքիս առաւելութիւնները, ընկերացած գնկապիպ շքեղ նկարներով: Վիեննայի Միսիթաբեան Տպարանը լոյս ընծայեց 1921—1923 տարիներուն Համշեթ, Օթելլօ, Մակբեթ եւ Վենետիկի վաճառականը: Թարգմանութեան յաջողութիւնն եւ թարգմանչին ձեռք բերած խոր հմտութիւնը Շէքսպիրեան գրականութեան գնահատուեցան Շէքսպիրեան Կաճառէն, որ հռչակեց թարգմանիչն անդամ՝ նոյն Կաճառին: Մասէհեան հաստատ որոշած էր տալ հրատարակութեան նոր հատորներ եւս, որոնք պատրաստ էին տպագրութեան, երբ հասաւ անողոր մահը վերջ տալու իր կեանքին:

Այս թարգմանութիւնները, որոնք կ'երեւցնեն իրենց վրայ թարգմանչական արուեստ, հմտութիւն նիւթին եւ կատարելութիւն տոհմային լեզուին հաճելի, դիւրասահ եւ ճկուն հայերէն մը, պիտի կազմեն յուշարձան մը Մասէհեանի շիրմին վրայ, պահելու անմոռաց անոր Անունն եւ Վաստակը հայ գրականութեան համար:

Հ. Մ. Ա.

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 10, 11

ՀՈԿՏԵՄԲԵՐ—ՆՈՅԵՄԲԵՐ

ԽԵ. ՏԱՐԻ 1931

ԵՂԻՅԷ ՎԱՐԳՍՅԱՆ

ԵՒ ԻՐ ԳՆՏՄՈՒԹԻՒՆՆ ԿՆՈՅ ԳՆՏԵՐԱԶՄԻՆ

ՔՆՆԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՆ

(Շարունակութիւն):

25. ՅԱԶԿԵՐՏ Բ. = ԽՈՍՐՈՎ Ա. ԱՆՈՒՇԸՆՈՒԱՆ

Գ. «Քուշաներու» դէմ արշաւանքներ:

«Քուշանք» կ'անուանէ Եղիշէ «Հոնաց աշխարհի տէրութիւնը», այս ինքն հիւսիսական վաչկատուն ազգերու յայն կոյս Պարսկաստանի հիւսիս-արեւելեան սահմաններու կողմած պետութիւնը: Պարսից եւ Քուշանաց այս զբաղիւթիւնը շատ անգամ տուած է առիթ պատերազմական ընդհանուաներու երկու ազգերու մէջ: Այսպիսի չորս ընդհարում կը յիշատակէ Եղիշէ, տեղի ունեցած «արքայից արքայի» օրով, համեմատաբար կարճ ժամանակի մէջ:

1. Երբ Հոովմէական երկիրները մղուած արշաւանքներէն յողթական վերադարձաւ «արքայից արքայի», խորհուրդ տուին իրեն մոգերը, որ այժմ դէնքը դարձնէ Քուշաներու դէմ: Արդեամբք ալ հրովարտակ կը հանէ արքայն եւ գէնքի կը հրաւիրէ իւր պետութեան բոլոր ազգերը՝ Արիներն եւ Անարիները. ի մէջ այլոց կը գրէ Հրովարտակին մէջ. «Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղացար գնացաք յերկիրն Յունաց, եւ առանց գործոյ պատերազմի՝ սիրով մարդասիրութեամբ նուանեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն... Մեք ի մտի եղաք անվրէպ խորհրդով խաղալ գնալ յաշխարհն արեւելից¹, աստուածոցն օգնակաութեամբ դարձուցանել ի մեզ գտերութիւնն Քուշանաց: Դուք իբրեւ զհրովարտակս դայս տեսանէք, անխափան վազվազակի այրեւձի

¹ Այս ինքն Խորասան. տե՛ս այս մասին քիչ ետքը:

գումարեցէք առաջի քան զիս, յանդիման լեռուք ինձ յԱպար աշխարհին» (էջ 9—10): Հրամանը ուղղուած էր Հայոց, Վրաց, Աղուանից, Լիւնաց, Ծաւղէից եւն (10): Զօրագունդերը կը հաւաքուին ժամադրաւայրը. գործնք առած թագաւորը, «խաղաց գնաց միանգամայն ի վերայ տէրութեան Հոնաց աշխարհին, գոր Քուշանս անուանեն. եւ գերկեամ մի կռուեալ, ոչինչ կարաց ազդել նոցա: Ապա արձակեաց զմարձիկսն յերաբանչիւր տեղիս. եւ զայս ի նոցա տեղիս միտանակ առ իւր կոչեաց նովին պատրաստութեամբ: Այսպէս ալ յամէ սովորութիւն կարգեաց եւ իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց, նկնեալ ի չորրորդ ամէ տէրութեանն իւրոյ մինչեւ յամն մետասաներորդ քաղաւորութեանն: Եւ իբրեւ ետես եթէ հաստատուն կացին Հոռոմք յուխտին իւրեանց՝ գոր եղին ընդ նմա՝ եւ դադարեցին իւրեանց իւրեանց եղանել ընդ պահակն ձորայ, եւ յամենայն կողմանց խաղաղութեամբ բնակեաց աշխարհ նորա, եւ ի նեղ եւս էարկ գրազաւորն Հոնաց, քանզի աւերեաց գրազում գաւառս նորա, եւ յաջողեցաւ տէրութիւն նորա՝ աւետաւորս առաքեաց ընդ ամենայն ասորուշանս աշխարհին իւրոյ... (էջ 11):

2. Հազիւ տարի մ'անցած՝ միւսանգամ կը գործէ արքայից արքայ յարձակում թշնամիներու երկիրը, «Արդ ի սկզբան երկոտասան ամի թագաւորութեանն իւրոյ գունդ կողմէր անհամար բազմութեամբ, յարձակեալ հասանէր յերկիրն ի Տաղական: Զայս տեսեալ թագաւորին Քուշանաց, ոչ հանդուրժէր երանել ընդ առաջ նորա պատերազմաւ, այլ խոյս տուեալ ի կողմանս ամուր անապատին թագստեամբ սպրէր հանդերձ ամենայն զօրօքն իւրոյք: Իսկ սա ասպատակ արձակէր դաւառաց, տեղեաց, վայրաց, առնոյր զբազում բերդս եւ զբաղաքս, կուտէր

զգերին, զառ եւ զսպուռ եւ զաւար, ածէր հասուցանէր յերկիր իւրոյ տէրութեանն» (16):

3. Հայ նախարարները բարձրագոյն Դուռը կոչուած են. արքայից արքայն սաստիւ կը դնէ անոնց առջեւ երկընտրանքի. կա՛մ յանձն առնել ուրանալ քրիստոնէութիւնն եւ ընդունիլ զրադաշտական դէնը, եւ կա՛մ ենթարկուիլ աքսորի ի Սակաստան: Ի սկզբան կը դիմադրեն հրամանին նախարարները. բայց ապա կ'որոշեն առ երեսու ուրանալ քրիստոնէութիւնը: Մինչ անոնք այս խորհրդի վրայ էին «ի նմին ժամանակի գուժկան հասանէր ի կողմանցն Քուշանաց, եթէ գունդ հատաւ ի թշնամեացն, որ ելին աւերեցին զգաւառս բազումս արքունի: ... Եւ անորէն (արքայն) ճեպեալ տաղնապէր զայրուճին յառաջ արձակել. եւ ինքն փութով ստէպ զհետ երթայր» (37): Յուսալի էր, թէ այս լուրին վրայ ամբապնդուէին նախարարները իրենց հաւատքին մէջ. բայց անոնք կ'աճապարեն յայտնիլ արքային թէ հաւան են հետեւելու իր հրամանին: Մինչ արքայն զօրքով յառաջ կը խաղար դէպի Վրկանաց աշխարհը, հայ նախարարները անհամար մողերու ընկերակցութեամբ կը մերձենան Հայաստանի սահմաններուն:

Արքայից արքայի արշաւանքը կը ձախողի. «զի յԱրեւելից պատերազմէն կորակոր եւ ոչ բարձրագլուխ էր դարձեալ» (63): Այս միջոցին կ'ապստամբի նաեւ Հայաստան: Թագաւորը «ի տեղի ձմերոցին» կը գտնուէր, երբ Սուրհանդակը կը բերէր իրեն Հայաստանի ապստամբութեան բօթը:

4. Յազկերտ Բ. իւր թագաւորութեան ԺԶ. տարւոյն կը ստիպուի միւսանգամ արշաւել Քուշաններու դէմ: Այս արշաւանքին համար Եղիշէ Ղ. Փարպեցին ունի իւր առջեւ աղբիւր: Երկու պատմագիրներու տեղիքները կը դնեմ դէմ առ դէմ.

Ղ. Փարպեցի, 86—87. Եղիշէ, Ը. 110—112. Եւ յամի ԺԶ թագաւորութեան իւրոյ Յազկերտ շու արարեալ ամենայն բազմութեամբ իւրով խաղայր ի պատերազմ ի վերայ Քուշանաց: Հրամայէր եւ զկապեալսն Հայոց, զքահանայսն եւ զնախարարսն, խաղացու-

ցանել ընդ իւր ի Վրկանէ: Եւ ելեալ յԱպար աշխարհ, եւ եկեալ ի շահաստանն որ անուանեալ կոչի Նիւշապուհ՝ հրամայէր պահել անդ զկապեալսն Հայոց... ի դրեակ շահաստանին Նիւշապուհ: ... [Եւ ինքն թագաւորն խաղայր յառաջ]... Եւ հասեալ ի սահմանս թշնամեացն՝ եւ ոչ սահաւ մի մասամբ կատարէին խնդիրք թագաւորին, այլ ամենայնիւ նկուն եղեալ դառնայր ամօթալից, կորուսեալ ի զօրաց իւրոց արս ընտիրս եւ սկանաւորս, նոյնպէս եւ յայլ ուսմիկ այրուճիոյ: Քահանայն ոչ դէմ յանդիման ճակատեալ թշնամեացն պատերազմէին ընդ զօրսն Պարսից, այլ յեղակարծուին անկեալք ի վերայ միոյ միոյ քեւի՝ հանէին ընդ սուր զբաղումս, եւ ինքեանք դարձեալ անգնաց աներեւոյթ լինէին: Եւ այսպէս ի բազում ատուրս արարեալ՝ վատնէին սաստիկ հարուածով զգօրսն Պարսից: «Թագաւորին Յազկերտի տեսեալ զայնպիսի պարտութիւն (տպ. թեթեւութիւն) ծանականաց իւրոց յանհարկն տրտմութիւնս ընկղմեալ մաշէր»... Մողերը պատճառն կու տան «ի ցամառէ աստուածոցն, որ կարի խիստ զայրացեալ են մեզ յազառ աստուածասպան քահանայիցն Հայոց, որ վաղ արժանի էին մահու...»: Կը հաւատայ թագաւորը եւ կը հրամայէ սպաննել զանոնք: Սամուէլ եւ Աբրահամ կը նահատակուին ի Վատդէս² (87, 104):

² «Վատգետս» (Եղիշ. 139) եւ «Վարդգէս» (Փարպ. 104) կարգաւ՝ Վատգէս (պահլ. Wārdēs, արբ. արբ. արբ. 67 ունի Վատագէս: Վատգէս հին Բակարիայի գաւառներէն էր, ոչ շատ հեռու Բահլ շահաստանէն: Յազկերտ Բ. ի օրով Պարսից կը վերաբերէր. ապա Պերոզ ստիպուեցաւ Հեփթաղներուն թողուլ, որ դարձաւ այնուհետեւ անոնց իշխանութեան գլխաւոր կենդրոնը: 616/17ին արշաւեց այս կողմերը Սմբատ Բագրատունի եւ հասաւ «մինչեւ ի

կապանօք զնախարարսն եւ զքահանայսն հրամայէր պահել ի դրեակ քաղաքին ի Նիւշապուհ: ... (Թագաւորն Քուշանաց) փութացաւ վաղվաղակի զօր ժողովէր, դունդ կաղմէր՝ ելանել նմա ընդ առաջ հօր ձեռամբ: Զի թէպէտ եւ ոչ կարէր յանդիման տալ պատերազմ ընդդէմ նորա, այլ ի վերջոյ, քեւայն անկեալ բազում հարուածս հասուցանէր ի վերայ զօրացն արքունի: Եւ այնպէս նեղեալ շտապէր, զի անձուկ լաշկարաւ վատխտարակ արարեալ՝ այսրէն դարձուցանէր. եւ ինքն սաստակաւ զհետ մտեալ աւերէր զբազում գաւառս արքունի. եւ ինքն ողջ անդամ անդրէն յերկիրն ետես եթէ անարդանօք եւ վատթարութեամբ դարձեալ եմ ի պատերազմէս, զիջաւ փոքր մի ի հպարտութեանէն»:

Մողերուն եւ մողերը պարտութեան պատճառը քրիստոնէաները ցոյց կու տան: Սամուէլ եւ Աբրահամ կը նահատակուին «ի Վատգետս»² (139):

Ղազար Փարպեցի այսպիսի երկու պատերազմներու մասին խօսք կ'ընէ, մին մղուած 449էն յառաջ եւ երկրորդը 454ին: Ինչ կը վերաբերի երկրորդ պատերազմին՝ լսեցինք արդէն Ղազարի հաղորդագրութիւններէն (տե՛ս վերը): Առաջոյն մասին դժբախտաբար շատ համառօտախօս է Ղազար. բայց եւ այնպէս չափազանց հետաքրքրական, որովհետեւ նաեւ հայ դունդերու մասնակցութիւնը երեւան կու դայ: 451/52ին երբ կը հարցաքննուէին Ս. Քահանայք ի Տիգրոն, մողերը կը կշտամբէին զանոնք թէ «կորուսէք ձերով կախարդութեամբ զայնպիսի քաջ այր զՎարդան, զի յօդտակարութիւն էր Արեաց տեսուն. եւ զմեծամեծ գոր-

Բահլ շահաստան Քուշանաց եւ աւար հարեալ դերկիրն ամենայն՝ գէարեւ (տպ. գէար եւ), զՎատագէս, զՏոխարստայն (Toxaristan) ամենայն եւ զՏաղական» եւ այս ետ դառնալով «բնակէր ի Մարզ եւ ի Մարդուտ (ի Մարզ եւ ի Մարդուտ) գաւառի» (Սեբ. 67): Վատգէսի մասին հմմտ. Marquart, Eransahr, 64—78, 150 եւն.:

³ Eransahr, էջ 49—50:

Յազկերտ Բ. ի արշաւանքները Քուշաններու դէմ:

«Քուշան» կոչուած ժողովուրդը հին Բակարիայի (այժմեան Սորասանի) մէջ կը բնակէր. ունէր զլիսաւոր քաղաք Բահլ շահաստանը, ուսկից կը սերեցնէր Ազաթանդուս (էջ 17) Արշակունիները: Այս աշխարհը վաղ ժամանակներէ ի վեր մարդ եղած էր Սասանեան պետութեան. պարսիկ մարդպանները, որոնք կը կառավարէին այս կողմերը, կ'անուանէին իրենք զիրենք «արքայ», նաեւ «արքայից արքայ Քուշանաց». կան այս վերտառութեամբ դրամներ յանուն Որմիզդի եւ Պերոզի («Պերոզ մեծ արքայ Քուշանաց»), զորոնք Յ. Մարկուարտ կը միտի Գ. դարէն համարիլ³: Առաջին անգամ, ինչպէս կ'ընենայ, Շապուհ Բ. ի (309—379) օրով բարձրացուցին Քուշանները անկախութեան դրօշը. Բիւզանդ (Ե. Գ., 37) կը յիշէ թէ 368ին Շապուհ կուսած է Քուշաններու թագաւորին հետ եւ չարաչար պարտուած: Այս թուականէն ի վեր պահեցին Քուշանները իրենց անկախութիւնը եւ անդադար յարձակումներով եղան պատուհաս Սասանեան արքայից:

Թէ նաեւ Յազկերտ Բ. ստիպուած է պաշտպանել իւր սահմանները Քուշաններու դէմ, ունինք հաւատարիմ տեղեկութիւններ հայ եւ օտար աղբիւրներու քով:

Ղազար Փարպեցի այսպիսի երկու պատերազմներու մասին խօսք կ'ընէ, մին մղուած 449էն յառաջ եւ երկրորդը 454ին: Ինչ կը վերաբերի երկրորդ պատերազմին՝ լսեցինք արդէն Ղազարի հաղորդագրութիւններէն (տե՛ս վերը): Առաջոյն մասին դժբախտաբար շատ համառօտախօս է Ղազար. բայց եւ այնպէս չափազանց հետաքրքրական, որովհետեւ նաեւ հայ դունդերու մասնակցութիւնը երեւան կու դայ: 451/52ին երբ կը հարցաքննուէին Ս. Քահանայք ի Տիգրոն, մողերը կը կշտամբէին զանոնք թէ «կորուսէք ձերով կախարդութեամբ զայնպիսի քաջ այր զՎարդան, զի յօդտակարութիւն էր Արեաց տեսուն. եւ զմեծամեծ գոր-

ծոց նորա յիշումն առ Արեաց աշխարհին, զոր բազում զօրագլուխք եւ այլ արեք յիշեն, ընդ որս նորա կու եղեալ էր, այլ եւ գոր իւր իսկ աստուածամամն տեսն իւրով աչօք տեսեալ էր ի Մարդիտոտ՝ գնորս քաջապրտութիւնն» (79):

Մարդիտոտը Մարզէն 47 փարսախ հեռաւորութեան՝ Վրկան աշխարհի հիւսիսարեւելեան սահմանաքաղաքն էր, կառուցուած ըստ անանդութեան Վուամ Ե. Էն, Բահլ շահաստանի ուղղութեամբ⁴: Ուստի Վարդան Մամիկոնեան մասնակցած է արշաւանքի մը, որ ուղղուած էր Քուշաններու դէմ՝ Յազկերտ Բ. ի հրամանատարութեան տակ:

Նման արշաւանք մ'ալ կը յիշէ Կարխայի վիկաներու վկայադիրը⁵. Յազկերտ Բ. իւր թագաւորութեան Ը. տարւոյն (445/46) կամ թէ անկէ ետքը «խաղաց զնաց Տշոլ գաւառը եւ նուաճեց այն կողման փոքր թագաւորը. եւ շինեց հոն քաղաք մը եւ անուանեց զայն իւր անուամբ «Յազկերտի Շահաստան» (Shahristan-i Jazgerd): Տակաւին հոն կը գրտնուէր, երբ հեռացուց իւր բանակէն քրիստոնէաները: Ողորմելին կը կարծէր թէ իր պարտութեան պատճառները քրիստոնէաներն եղած էին: Եւ զատեց (իւր բանակէն) 10.000 մող-այր (պարսիկ), առաւ անոնց այրութիւնն եւ դրաւ զանոնք իւր ծառայութեան մէջ. շատերը մեռան այս դատաստանին հետեւութեամբ»: Արքունիք վերադառնալէն ետքը կը հրամայէ որ Սղակ քաղաքի մերձակայ Կարխայի⁶ քրիստոնէաները բռնի մոգական կրօնի դարձնեն:

Տշոլ (Tšol) գաւառին տեղը կը մնայ տակաւին ինդրական. այս պատճառաւ դժուար է ստուգել թէ Յազկերտի այս արշաւանքը Քուշանաց դէմ ուղղուած էր: Նէօլեկէ, Հոֆֆման եւ Մարկուարտ կը նոյնացնեն անունս սանսկրիտ, պահլաւ եւ արաբ գրականութեան մէջ յաճախ յիշուած Զոլ ժողովրդեան հետ, որ թրքական ցեղ մըն էր եւ իւր բնակութիւնն ունէր Վրկանի հիւսիսային կողմերը գտնուած Դեհիստան լեռնաշխարհի մէջ, որուն հետ Սասանեան արքաները, յատկապէս Պերոզ եւ Սորուզ Ա.

⁴ Eransahr, 53, 67, 75—76 եւն.:

⁵ Hoffmann, Auszüge, էջ 30:

⁶ Karxa de Beth-de ox, որ այժմեան Բերքուքն է. հմմտ. Hoffmann, անդ, էջ 267—268:

բախումները ունեցան⁷: Բայց որովհետև այս ժողովուրդը նաև Պարսկաստանի ուրիշ սահմաններում վրայ, յատկապես ձորայ պահակին առջև երեսան կու դայ, ըստ ոմանց նոյն իսկ պահակին անունը ձոր-այ, Չոր-այ անոր յորըրջանքէն ծագած է, կրնայ Ասորւոյն Տշրը նաև այս կողմերը մտածուիլ (ինչպէս կը միտէր ի սկզբան կարծել Հոֆֆման ալ): Այս մասին ամէն կասկած պիտի փարատէր, եթէ այլուստ ծանօթ ըլլար Յագկերտի շահաստանի տեղը: Վերոյիշեալ գիտունները նաև քաղաքս Վրկանի մէջ կը փնտռեն: Բայց Մասուդի գիտէ թէ Դերբենդի (ձորայ պահակի) մօտերը կային Յագկերտակերտ շինուածքներ⁸. կը վկայէ նաև տեղական աւանդութիւն մը թէ Յագկերտ Աղեքսանդր Մեծին վերագրուած Դերբենդի պարիսպները հողէ եւ աւազէ սրբած եւ վերանորոգած ըլլայ⁹:

Յամենայն դէպս եթէ պատերազմս Պարսկաստանի հիւսիս-արեւելեան սահմանին վրայ մղուած է, իւր համագոր տեղիքն ունի Ղազարի նկարագրած 454ի կռուին մէջ: Երկու կէտ մասնաւորապէս աչքի կը դարնէ. թէ հայն եւ թէ ասորին պատերազմին արդիւնքը Պարսից համար անյաջող կը ներկայացնեն. երկուքն ալ միաձայն կը վկայեն թէ մոգերը պարտութեան պատճառ քրիստոնեաները մեղադրեցին. Ղազարի համաձայն ասոր առաջին գոհերը եղան Ս. Քահանաները. իսկ ըստ Ասորւոյն արքունի հրամանաւ կարանաւորուեցան Կարիսայի եւ շրջակայից քրիստոնեաները: Ըստ այսմ ժամանակի մասին Ասորւոյն արդէն շատ անորոշ ակնարկութիւնը, թէ դէպքս պատահած է Յագկերտի Ը. տարւոյն (446) կամ անկէ քիչ ետքը, կը

⁷ Nöldeke, Tabari, 123, 131, 158. Hoffmann, Auszüge, էջ 277—281. Marquart, Eranšahr, 73. նոյն՝ Kultur- und sprachgeschichtliche Analekten. Ungarische Jahrbücher, IX, S. 68—103 յատկապէս էջ 101—103. վերջին գրուածքիս մէջ Մ. կը յիշէ սանակիտ գրականութենէն Col-Avaganā որով կ'իմանայ Քօբշայի վերին ընթացքի վրայ, Հեփթաղներու բնիկ երկրի, Հաֆթալի հարաւային կողմը գտնուած Յամգան աշխարհի բնակիչները. նոյնպէս պահաւոր գրականութենէն Parisp-i Col (Չորի պարիսպ) իբր մարդու անուն. եւ Պարսկական նահանգներու շահաստաններու ցուցակէն (պահաւորէն) տեղիք մը, որուն համաձայն Յագկերտ Ա. Շապուհ որդին Կամը շահաստանը Չոր ժողովրդեան յարձակումները խափանելու համար ամուր պահակի վերածած է:

⁸ Hoffmann, Auszüge, էջ 277:

⁹ Derbend-Näme, տպ. Քաղէմ-բէգի, էջ 11. Հմմտ. W. Bartholdi յօդուածն Դերբենդի մասին ի Enzyklopädie des Islam, I, 979—985:

կորսնցնէ իւր նշանակութիւնը. կասկածելի է նաև գրութեան հնութիւնը, որ Զ. դարու խմբագրութիւն մը կը համարուի¹⁰:

Պարսկական դէնքի ճիշդ այս անյաջողութիւնն էր, որ պատերազմները հիւսիս-արեւելեան սահմանին վրայ երկար շարունակուեցան: Պրիսկոս¹¹ կը յիշէ թէ 456ին, երբ Լազերու Գորադէս թագաւորը Հոռոմայեցիներէն նեղուած դիմեց Յագկերտին անկէ օգնութիւն խնդրելու, իր խնդիրը «մերժեց Պարթեւներու թագաւորը (Յագկերտ), որովհետև ինքը Կիլարացի կոչուած Հոններու (= «Քուշանք») հետ պատերազմի մէջ էր»: Հաղիւ Պերոզի օրով յաջողեցաւ Պարսից խորտակել թշնամուոյն ոյժը:

Յագկերտ Բ.ի Քուշաններու դէմ մղած պատերազմներու մասին այս տեղեկութիւններն միայն ունինք հայ եւ օտար աղբիւրներու մէջ: Եթէ համեմատութեան առնենք անոնց հետ Եղիշէի հաղորդագրութիւնները Ա.—Գ. արշաւանքներու մասին, պիտի մնանք շուարած. ի՞նչպէս միաբանենք դանոնք Ղազարի հետ եւ կամ ո՞ր տարիներու մէջ դեպքերը: Դիւրին է անշուշտ Գ. արշաւանքը նոյնացնել 454 տարւոյս դէպքերուն հետ. եւ արդէն բառ առ բառ նոյնութիւնը կը մատնէ փոխառութիւնը: Բայց ինքնակաց կը մնան Ա.—Գ. արշաւանքները¹²:

Եւ ճիշդ այս ինքնակացութիւնը պէտք է արթնցնէր ուշադրութիւն անդրադառնալու մէկ կողմանէ Ղազարի լուրթեան եւ միւս կողմանէ Եղիշէի տեղեկութիւններու տարօրինակութեան: Եթէ Ղազար համաձայն է Եղիշէի Գ. արշաւանքին մէջ, ինչո՞ւ եւ ի՞նչպէս Ա.—Գ. արշաւանքներուն, յատկապէս երրորդին մնացած է անձանօթ: Պատճառախնդիր եւ անկեղծ պատմադիր մը, որպիսին է Ղազար, չէր կրնար պատմել դէպքեր,

¹⁰ A. Baumstark, Geschichte der syrischen Literatur, էջ 135:

¹¹ Պրիսկոս, էջ 217 տպ. Բոննի. Հմմտ. եւ Eranšahr, 56, ծ. 4:

¹² Ed. Drouin, Mémoire sur les Huns ephthalites dans leurs rapports avec les rois perses sassanides. Le Muséon, 14 (1895), էջ 158 խօսելով Յագկերտ Բ.ի այս կռիւներու մասին շատ անճիշդ յառաջերուութիւններով Եղիշէն եւ Ղազարէն՝ կը գրէ. «Ce prince entreprit plusieurs campagnes contre les Ephthalites; mais ni les auteurs grecs, ni les auteurs musulmans ne parlent de ces guerres qui seraient restées ignorées pour nous sans les historiens arméniens: Elisée, Lazare de Pharbe et Vardan». Բայց մենք տեսնք թէ ծանօթ են անոնք Ասորւոյն եւ Պրիսկոսի:

ԽՈՍՐՈՎ Ա.

որոնք ոչ միայն չեն եղած, այլ եւ կը հակասեն իրար խայտառակարար: Եւ իրօք Եղիշէի Ա.—Գ. արշաւանքները դասական տիպարներ են ներքին հակասութիւններու, անոնք չէին կրնար գրի առնուիլ մտածող պատմագրէ մը, եւ ոչ իսկ վիպագրէ: Անոնք նշաւակիչ կոթողներ են խմբագրին անիմաստասէր բարքին եւ վեր ի վերոյ կարկատանքին: Եւ մեծ հանճարի պէտք չկար զգալու խօսող հակասութիւնները մտքի եւ ժամանակագրութեան. որովհետև Յագկերտ Բ. եթէ իւր թագաւորութեան Գ.—ԺԱ. տարիներուն (441—448) հարուածեց Քուշանները, «ի նեղ եւս էարկ զթագաւորն Հոնաց» եւ ԺԲ. տարւոյն (449/50) ջախջախեց անոնց ոյժը, փախստական վարեց «ընդ ամուր անապատն» անոնց թագաւորը, հետապնդեց, քանդեց անոնց աշխարհը եւ բնակիչները գերի տարաւ, ի՞նչպէս տարի մը վերջ՝ 450/51ին կ'ենթարկուի անոնց ուժգին յարձակման եւ «կորակոր» կը վերադառնայ եւ 453/54ին երկրորդ պարտութիւն մ'ալ կը կրէ:

Հակաթամանակագրական է դարձեալ մտածել, թէ Յագկերտ Բ., որ 449էն յառաջ ըստ Ղ. Փարպեցւոյ ի Մարմիրոտ Քուշաններու յարձակումն ետ մղել կը ջանար, խորամուկ եղած ըլլայ երբեք Տաղական երկիրը «աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ գտէրութիւնն Քուշանաց»: Տաղական երկիրը, որ կը գտնուէր սեպհական թագաւորով Պարսկաստանի արեւելեան սահմանին վրայ, համանուն սահմանամերձ քաղաքով, առաջին անգամ — որչափ ծանօթ է պատմութեան — 468ին եւ այն կարճ ժամանակ մը միայն միացաւ սասանեան պետութեան, շնորհիւ Պերոզի Կիլարացի Հոններու վրայ տարած յաղթութեան¹³:

Արդէն այն պարագան, որ արքայից արքայի հրովարտակը կը պարունակէր իր մէջ փրօն ակնարկութիւններ պարսկահանութեան մէկական պատերազմի մասին, ցոյց կու տայ թէ նաև հրովարտակս եւ անոր հետ սերտիւ կապուած Ա.—Գ. արշաւանքները կը պատկանին անոր, որ 540ի եւ յաջորդ տարիներու պատերազմի հեղինակն էր:

¹³ Հմմտ. Marquart, Eranšahr, էջ 53 եւ յջ. 80 եւ յջ. 3:

1. Պարսիկ-Քուշանական եւ պարսիկ-Խեփթաղական յարաբերութիւնները 458—540: Հիւսիս-արեւելեան սահմաններու վրայ պատերազմը յառաջ տարաւ Պերոզ, Յագկերտի որդին: Քուշանները, որոնք «Կիլարացի Հոններ» կը կոչուին Պրիսկոսէն¹⁴, մեծ պարտութիւն մը կրեցին 468ին, եւ տեղի տալով պարսկական յառաջխաղացութեան առջև քաշուեցան Հինդուքուշի անցքէն եւ դարձան հաստատեցին Պեշաւարի մէջ նոր պետութիւն մը:

Այժմ պարսկական սահմանի վրայ երեւցաւ նոր թշնամի մը՝ Հեփթաղը: Պերոզ, որ չէր ուզեր Կիլարացի Հոններու վրայ տարած յաղթութեան պտուղներէն զրկուիլ, հարկ տեսաւ նաև Հեփթաղներու հետ կռուիլ, բայց ինկաւ անոնց ձեռքը գերի: Ի դին ազատութեան ստիպուեցաւ հրաժարիլ Տաղականէն: Թէեւ խոստացած էր Հեփթաղներուն յարգել սահմանները, բայց եւ այնպէս փորձեց նոր յարձակում մ'ալ եւ դարձեալ ինկաւ գերի¹⁵: Այս անգամ մեծ դուժարի մը փոխարէն ազատ արձակուեցաւ, կապելով երդում, թէ պիտի չխախտէ այլ եւս խաղաղութիւնը: Հաղիւ վճարած էր յանձն առած ահագին դուժարը, երբ Պերոզ երրորդ անգամ յարձակեցաւ Հեփթաղներու վրայ. բայց կրեց ահաւոր պարտութիւն մը, երբ ինքն ալ, բանակն ալ հետակորոյս ջնջուեցան¹⁶:

Մարսպիւրի եղաւ պարտութեանս հետեւութիւնը Պարսկաստանի համար: Այս աղէտը ակնարկելով Նիխոր Վչնասպ, Պարսիկ գորավարը կ'ըսէր Վահան Մամիկոնեանին¹⁷. «Որ (Պերոզ) կորոյս գինքն եւ գամենայն Արեաց աշխարհի դոյժ եւ զգորութիւն. եւ գրագաւորութիւն մի մեծ եւ գազաւ ի ծառայութիւն ետ Հեփթաղին. յորմէ ի դաւն ծառայութեան մինչ կեցանի է Արեաց աշխարհն՝ գերձանել ոչ կարէ»: Իրօք ալ Հեփթաղներն ոչ միայն նուաճեցին Տոխարիստանը, այլ եւ յառաջացան դէպի արեւմուտք եւ գրաւեցին պարսկական շատ գաւառներ. եւ գրին արքայից արքայի, տկար վաղարչի վրայ ծանր տուրք: Թէ Հեփթաղը

¹⁴ Պրիսկոս, էջ 159—165 եւն, Οὐνοὶ οἱ Κιδαρίται, Հմմտ. առ այս Eranšahr, 56—58, 214:

¹⁵ Ղ. Փարպ. 155:

¹⁶ Անդ, 154—156:

¹⁷ Անդ, 166:

ները մինչև ուր յառաջացած էին, կարելի չէ ճշգրիտ ըսել. բայց կ'երեւայ թէ իրենց ձեռքն էր Հարեւ (Հերաթ) քաղաքը: Այս նահանգի Պուշանգ եւ Վատոգէս դաւառներն ալ նուաճած էին Կատիշները, որոնք հաւանորէն նաեւ Մարվիտոս ամրոցին տիրացած էին: Բայց Պորասանի մայրաքաղաքը՝ Մարվը մնացած էր Պարսից ձեռքը:

Հեփթաղները, որոնք աւելի քան քառասուն աշխարհներ իրենց հարկատու ունէին¹⁸, երկար տարիներ նաեւ Պարսից արքունիքը իրենց հարկատու պահեցին: E. Drouin¹⁹ երեւան հանց իսլամ մը Սասանեան դրամներ, կտրուած Վաղարշի (484—488), Կաւատի է. (515) եւ ՊԳ. (531) եւ Պորովի Ը. (538) եւ ԺԳ. (545) տարիներուն, որոնց վրայ կը տեսնուին անձանթ գրով ընթերցուածներ: Ասոնք, ինչպէս կ'ընդունի Մարկուարտ²⁰, Հեփթաղներուն վճարելի դրամներ էին, ուստի Վաղարշի օրերէն սկսեալ մինչև 545 հարկատու մնացած էին պարսիկները իրենց ահաւոր թշնամուցն²¹:

Այս կորսուած նահանգները Հեփթաղներէն ետ կորզուել համար կ'երեւայ թէ ոչ Կաւատ եւ ոչ ալ Պորով փորձ ըրին: Ընդհակառակը զիտենք որ Կաւատ իւր թագաւորութեան սկիզբները անոնց նոր զիջումներ ընելու պարտաւորուեցաւ, իսկ Պորով, գոնէ մինչև 545, ամէն կերպ կ'աշխատէր, որ հօր արդեանք իրեն հետ հաշտ պահէ²²:

Այս թուականէն ետքը փոխուեցաւ քաղաքական հորիզոնն յանկարծօրէն: Հեփթաղական պետութիւնն ի հիմանց սասանեցաւ եւ Պորով արթուն գտնուեցաւ օգտուելու հանդամանքներէն ի նպաստ Սասանեան տան:

2. Հեփթաղներու տէրութեան կործանումն ըստ Շպիգելի: Ֆ. Շպիգել²³ այս անցքերու մասին հետեւեալ ամփոփումը կ'ընէ Ֆիրդուսիէն եւ արարական եւ յուսական աղբիւրներէ, զոր կարեւոր կը համարիմ գետեղել հոս ներածարար, ներկայացընելու համար ժամանակի պատկերը, գծուած թէպէտ ոչ լրիւ, բայց համառօտ եւ պայծառ:

«Լազիստանի շուրջը յարուցուած պատերազմը երկար տարիներ զբաղցուց հոն պարսիկները, բայց չենք լսեր, թէ 542էն ետքը Պորով անձամբ երեւցած ըլլայ ուղմադաշտի վրայ. կրնանք ասիլէ հետեւցնել, թէ անիկա Պարսկաստանի Հիւսիսային եւ Արեւելեան կողմերը կը գտնուէր՝ զբաղած իրեն համար շատ աւելի կարեւոր խնդիրներ կարգի բերելու: Հոսմէական պետութեան հետ այն ժամանակ կայացուցած էր զինագողար, զոր ինքը չէր ուզեր խախտել: Պիտի ենթադրենք բնականաբար, թէ Հեփթաղները հրաւիրած էին իր ուշադրութիւնը. բայց թէ ինչ մասնակցութիւն ունեցաւ ինքը Հեփթաղներու պետութեան կործանման մէջ, գիտար է իմանալ իրար հակասող տեղեկութիւններէն: Եթէ թագաւորաց գրքին հաւատք ոնծայենք, Հեփթաղներու պետութիւնը կործանողը ինքը չէ եղած, այլ Հիւսիսային ազգերը տուած են այս հարուածը: Չինաստանի Պաքանը, այսպէս կը պատմէ այս գիրքը, որուն իշխանութիւնը մինչև Յաքսարտէս, նոյն իսկ մինչև Ոքսոս կը տարածուէր, լսելով Պորովի ուժի մասին՝ որոշեց անոր հրեշտակութիւն մ'ուղարկել առատ սպարզեմերով, փափագելով այսու երկու պետութիւններու մէջ բարեկամական կապ հաստատել: Ղատաքար, Հեփթաղներու թագաւորը լուր առնելով այս մասին վերահաս կ'ըլլայ անոր նպատակներուն. որովհետեւ իր երկիրը այս երկու պետութիւններու մէջ տեղը կը գտնուէր, երկուց զգաց թէ անոնք իրարու մէջ բարեկամական կապ հաստատելով կարող են օր մը դաշնակցիլ եւ իւր երկիրը իրենց մէջ բաժնել: Այս պատճառաւ ալ երբ Պաքանին զեսպանները իւր երկրէն կ'անցնէին, բռնել եւ սպաննել տուաւ զանոնք: Ասոր վրայ պատերազմ զբաղուեցաւ Պաքանի եւ Ղատաքարի միջեւ. վերջինս պարտուեցաւ եւ աշխարհընուածուեցաւ Պաքանէն: Պաքանի իշխանութեան այս ընդարձակումը շատ վտանգաւոր երեւցաւ Պորովի. համարեցաւ թէ ինքն ալ իրաւունք ունի այս աշխարհի (Հեփթաղներու) ինչ ինչ մասերու վրայ. այս նպատակով գումարեց Վրկան աշխարհի մէջ լայնատարած բանակ մը, խաղալու դէպի հիւսիս: Պորովի հետ պատերազմի հեռապատկերը զարհուրեցուց Պաքանը. անոնք եկան բանակցութեան. ի վերջոյ խնդիրը անուշի կապուեցաւ: Պորով

¹⁸ Frasnahr, 216:
¹⁹ Pevue numismatique, 1890, էջ 1—8:
²⁰ Frasnahr, 63:
²¹ Հմմտ. եւ Nöldeke, Tabari, 159:
²² Այս խնդիրներու մասին տե՛ս աւելի ընդարձակ Մարկուարտի աշխատութեան մէջ, Frasnahr, 47—65:
²³ F. Spiegel, Fran'sche Altertumskunde, III, 450—452. Հմմտ. նաեւ Drouin, անդ, էջ 279—288:

կնութեան առաւ Պաքանի դուտորը եւ ստացաւ Հեփթաղաց աշխարհին մեծ մասը: Թագաւորաց գրքին այս պատմութեան հետ համաձայն է նաեւ Մենանդը²⁴, որ 557ին (իմա՝ 567) Կ. Պոլիս եկող Աւարներու պատգամաւորութեան Յուստինոս Կայսեր ըսել կուտայ, թէ Թուրքերը հարկատու ըրին Հեփթաղները եւ անոնց պետութիւնը կործանեցին: Ուրիշ տեղ ալ կը պատմէ Մենանդը (էջ 354), թէ պարսիկ դեսպան մը ըսած ըլլայ, թէ իւր թագաւորը կործանած ըլլայ Հեփթաղներու իշխանութիւնը. կրնանք սակայն այս ըսուածքը սնապարծիկ պարծենկոտութիւն մը համարիլ: Բայց նաեւ կարգ մը արժանահաւատ վկաններ արեւելեան մատենագիրներէն, ինչպէս Մասուդի եւ Տարբարի, կը պատմեն թէ Պորով կործանած է Հեփթաղներու պետութիւնը, ըստ Տարբարի՝ Պաքանի հետ ի միասին. իսկ Պամգա ամենեւին իշխատակութիւն չ'ըներ այս մասին: Ըստ իմ կարծեաց՝ Թագաւորաց գրքին հաղորդած տեղեկութիւնները թէեւ յէականս ուղիղ են, բայց շատ համառօտուած»:

3. Թուրք տէրութեան սկզբնաւորութիւնը: Յառաւելագոյն լուսաւորութիւն յետագայ տողերուն յիշենք համառօտիւ նաեւ թրքական պետութեան ծագումը: Չին տարեգրները անոր հիմնադիրը կը համարին Թու-մէն (545—552), որ 545ին ուղարկեց իւր առաջին զեսպանը չինական արքունիք եւ պատուեցաւ Իլ-Պաքան տիտղոսով: Ասիկա 551էն ոչ շատ յառաջ հպատակեցուցած էր Թիէ-լէ կամ Պոյսոր (Ուիգուր) կոչուած ժողովուրդն եւ 552ին արչուած Ժու-Ժու կամ Ժուան-Ժուան (ըստ յունական աղբիւրներու Աւար եւ ըստ Ասորի հեղինակներու՝ Որոնացի) ժողովուրդեան վրայ, որոնք 553ին կը ջախջախին: Իր գահին վրայ կը յաջորդէ կարճ ժամանակ մը Ի-սի-քի-քան: Թուրք պետութեան բուն հիմնադիրն եղաւ սակայն Մո-կան-քան, կոչուած նաեւ Սսէ-քին, Ենթու, Սսէ-տուու, յոյներէն՝ Σιζιթուուս եւ արաբ մատենագիրներէ Սինջիբու (553—572): Սիլվիբուլ իւր զբօշին տակ միաբանած այլեւայլ թուրք յեղեր՝ եւ դաշնակցած Պարսից Պորով թագաւորի հետ՝ յարձակեցաւ Հեփթաղներու վրայ եւ կործանեց անոնց պետութիւնն ալ:

²⁴ Մենանդը, էջ 295—296:

Հեփթաղներու պետութեան նուաճմամբ ընդարձակուած իշխանութիւնը Սիլվիբուլի իսկ օրով բաժնուեցաւ երկու մասի. արեւելեան եւ արեւմտեան: Արեւմտեան թուրք պետութեան Պաքան կարգուեցաւ Սէ-տի-մի (Իսէտմիշ = Διζαβουλο.) որ կը նստէր յեկտագ (Ալտայի), բայց մեծ Պաքանի գերիշխանութեան տակ: Դիզարուլի յաջորդեց իր երէց որդին Տարտու Պաքան (Տատ-թաու-քան, կոչուած Պուկիա), որուն տէրութիւնն զարձեւալ երկու մասի բաժնուելով՝ արեւմտեան բաժինը ստացաւ իր կրտսեր եղբայրը՝ իր գերիշխանութեան տակ: Սինջիբուլ մեծ Պաքանի իշխանութեան յաջորդ կը յիշուի իր եղբայրն ծանօթ՝ Αρσιλας (Արսլան, չին. Թա-պո-քան) տիտղոսով²⁵:

4. Խոսարով Ա. կ'արչաւէ Հեփթաղներու դէմ: Աչքի առաջ ունենայով Պարսկաստանի հիւսիս-արեւելեան սահմաններու վրայ կատարուած այս քաղաքական փոփոխութիւնները, զիւրին պիտի ըլլայ ըմբռնել, թէ ինչո՞ւ մոգերը կամ պարսիկ աւագանին այնպէս հապճէպ կը ստիպեն արքայից արքայն, որ հարաւային սահմաններու վրայ զինադադար կնքելով իւր բովանդակ ոյժն ու ուշադրութիւնը կենդրոնացնէ երկրին հիւսիս-արեւելեան սահմաններու վրայ:

Անշուշտ առած էր պարսիկ աւագանին հաւաստի տեղեկութիւններ թրքական շարժման մասին, որ հեղեղօրէն դէպի արեւմուտք կը տարածուէր, ազգեր ջնջելով եւ աշխարհներ նուաճելով: Թուրք ցեղերու համախմբումը եւ դէպի հեփթաղական սահմաններ յառաջացումը մտահոգած էր պարսիկ զիւանազէտները: Որչափ ալ նաեւ Պարսից ցանկալի էր ահաւոր թշնամուցն Հեփթաղին օրհասական մահը, բայց եւ այնպէս չէր կրնար անտարբեր աչքով եւ առանց մտահոգուելու տեսնել պետութեան մը կործանումը, որուն մէջ մասին վրայ ինքն ալ ունէր վաղեմի իրաւունքներ, բաց աստի ինքն ալ իրրեւ դրացի պէտք էր մասն եւ բաժին ստանար այն հարուստ աւարէն, որ կ'իյնար

²⁵ Հմմտ. J. Marquart, Historische Glossen zu den alttürkischen Inschriften: Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, XII (1898), էջ 157—200. Frasnahr, 216. Դարձեալ՝ E. Chavannes, Documents sur les Tou-kiue (Turcs) occidentaux. Pétersbourg 1903 [ի հաւաքման Сводникъ трудовъ О. ПОН. К. И. ЭК. педичи. VI]. Նոյն՝ Notes additionnelles sur les Tou-kiue (Turcs) occidentaux ի թերթին T'oung-Pao, II 5 (1904), էջ 1—110:

յաղթողին ձեռքը: Այս քաղաքական հայեցակէտերով է որ խորհուրդը կու տան մոզերը խորհուրդին բանակով փոխադրուել արեւելեան սահմանը. «Ասեմ մոզքն. Արքայ քայ, աստուածքն ետուն քեզ գտերուք ինչ եւ գյաղքութիւն... Արդ գրանս գայտսիկ վաղվադակի կատարեա՛ դու, արքայ, գոր գու՛մաբեա եւ գունդ կազմեա՛, խաղա գնա դու յաշխարհն Քուշանաց. Եւ գամեայն ազգս ժողովեա եւ անցո ըստ պահ դուռն ի ներքս. Եւ դու անդէն արա քեզ բնակութիւն: Յորժամ արգելուս եւ փակեա գամեմեանս ի հեռաւոր օտարութեան, կատարին խորհուրդք կամաց քոց. Եւ որպէս երեւիս մեզ ի դեմիս մերում, տիրես դու եւ երկրին Քուշանաց; Եւ Յոյնք իսկ ոչ ելանեն ընդ քոյ իշխանութիւնդ: Հանոյ քուսեցա խորհուրդն քաղաւորին եւ մեծամեծացն, որ էին ի նմին բանի» (9):

Թէպէտ Եղիշէ, լաւ եւս խմբագրերը այս պատերազմական խորհրդածոցովին հակաքրիստոնէական նպատակներ կը վերագրէ, բայց անժխտելի է անոր զուտ քաղաքագիտական ձգտումը. որ ուղղուած է Հեփթաղներու դէմ: Խորհրդածոցովիս ծանօթ է նաեւ Ֆիրդուսի, որ իւր Թագաւորաց գրքին մէջ այսպէս կը գրէ²⁶. Երբ լսեց Սոսրով, թէ Թուրքերը յաջողութիւններ կ'ունենան եւ նուաճումներ կ'ընեն այն երկիրներու մէջ, որոնց վրայ ինքն ալ կը համարէր թէ իրաւունք ունի, ինչպէս Չաչի (Տաշկենտ²⁷) եւ Քաշան երկրի վրայ, ի ժողով հրաւիրեց աւագանին. բայց ասոնք խորհուրդը չտուին Հեփթաղներէն վրէժ լուծել, «որոնք Ահմեմեանն են, չարահաւատ եւ թշնամի Երանեանց», այլ լաւագոյն համարեցան Թուրքերու Սաքանին հետ բարեկամական կապ հաստատել: Բայց Սոսրով չանսաց այս իմաստուն խորհուրդին, եւ ի Մագայն (Տիգրան) հզօր բանակ մը հաւաքեց, զոր խաղացուց Վրկան աշխարհը, Հեփթաղներու սահմանը»:

Չորստորովի հրամանին պատճենը, որուն համեմատ «Արիք եւ Անարիք» գէնքի կը հրաւիրուին, ունեցած է Եղիշէ աչքի առաջ. ուշադրութեան արժանի է անիկա

²⁶ Հմմտ. Ed. Drouin, Mémoire sur les Huns ephthalites dans leurs rapports avec les rois perses sassanides. Le Muséon, t. XIV (1895), էջ 283:
²⁷ Հմմտ. Marquart, Eransahr, 155:

իրբեւ վաւերագիր մը, եւ ինչպէս ինձ կը թուի, ունի վաւերականութեան ամէն յատկանիշները²⁸. «Իրովարտակա գրէր, պնդով դեսպանս (պնդադեսպանս) առաքէր (արքայն) յամեայն տեղիս տէրութեան իւրոյ: Եւ այս է պատենն իրովարտակին»:

Առ ամեայն ազգս տէրութեան իմոյ, Արեաց եւ անարեաց, բազմացի ի մեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ. դուք ողջ լիբուք, եւ մեք մեզէն ողջ եմք դիցն օգնակաւորութեամբ:

Առանց գծեց ինչ աշխատ առնելոյ խաղացաք գնացաք յերկիրն Յունաց, եւ առանց գործոյ պատերազմի՝ սիրով մարդասիրութեամբ նուանեցաք գամեայն երկիրն մեզ ի ծառայութիւն. դուք գրարի գտաւ անձէք, եւ անսպառ լիբուք յուրախութեան. բայց բան գայս կատարեցէք վաղվադակի, գոր ասեմքս. Մեք ի մտի եղաք անվրէպ խորհրդովք խաղալ գնալ յաշխարհն արեւելից՝ աստուածոցն օգնակաւորութեամբ դարձուցանել ի մեզ գտերութիւնն Քուշանաց. դուք իբրեւ գիրովարտակա գայս տեսանէք, անխափան վաղվադակի այրեմի գումարեցէք առաջի քան զիս, յանդիման լիբուք ինձ յԱպար աշխարհին» (9—10):

Հրովարտակա ուղղուած էր «յաշխարհն Հայոց, ի Վրաց եւ յԱղուանից եւ ի Լիմաց, ի Մաղէից եւ ի Կորդուաց, յԱղմեաց եւ քազում այլ տեղեաց հեռաւորաց, որոց ոչ էին օրէնք երբքալ գայն քանապարհ յառաջ ժամանակաւ» (10):

Պատմագրին խօսքերը գեղեցիկ կերպով կը ներկայացնեն զօրակոչի հանդիսականութիւնն եւ ծանրակշուրութիւնը: Արքայից արքայն աւելի վտանգաւոր պատերազմի մը ձեռնամուխ պիտի ըլլար, քան որ էր Հուովմէականը. եւ զօրակոչին հասցնել ստիպումը ցոյց կու տայ, թէ իրօք ստիպիչ էին ժամանակի հանգամանքները:

Չորհանդէսի վայր կը նշանակուի Ապար աշխարհը, որով պէտք է հասկնալ Նիւշապուհ շահաստանը Ապար աշխարհի ի Վրկանս²⁹:

²⁸ Հրովարտակին խօսքերէն կ'երեւայ թէ պատճենս ուղղուած էր Հայերուն, որոնք չէին մասնակցած 541—542 տարիներու արշաւանքներուն:
²⁹ Ապար աշխարհ (Փարպ. 86, 89) եւն, Եղիշ. 10, 110) էին պահաւան ձեւն է Ապրշաիրի (Սեր. 23, 65), որ բառական թարգմանութեամբ «Վերին աշխարհն» է (Հմմտ. Եղիշ. Բ. 123. «Երեւելի ընդ ամենայն Վերին աշխարհս»): այսինքն Պարսկաստանի հիւսիսային մասը, որ կը տարածուէր մինչեւ Վրկան աշխարհի սահմանները: Նահանգիս շահաստանն էր Նիւշապուհ, զոր կատուցած է Շապուհ Ա.: Շատ յաճախ նահանգին անուամբ յորջորջուած է շահաստանը եւ հակառակէն շահաստանի անուամբ նահանգը (Nöldeke, ZDMG. 31, 151. Marquart, Er., 74): այսպէս նաեւ հոս Ապար աշխարհով ակնարկուած է Նիւշապուհ:
³⁰ Այս քաղաքական-գիտութեամբ բաժանման մասին կը գրէ Տարբի (էջ 155), որուն հետ համաձայն են յիշական Ֆիրդուսի եւ արար ուրիշ աղբիւրներ. «Սոսրովի դահ բարձրանալէն յառաջ բանակին սպայակազմը (spahbeth), այսինքն վերին հրամանատարութեան պաշտօնը մէկ հողույ ձեռքն էր. իր այս պաշտօնը կ'ընդգրկէր ըզմանակ պետութիւնը: Երբ թագաւորեց Սոսրով, այս պաշտօնն եւ պատիւը չորս հողույ վրայ բաժնեց. այսինքն ա. Արեւելքի, այս է՝ Սորասանի եւ դրացի աշխարհներու սպայակազմ: Բ. Արեւմուտքի սպայակազմ: Գ. Նիւշապուհ, այս է՝ Եմենի սպայակազմ: Դ. Ատրպատականի եւ դրացի աշխարհներու, այն է՝ Սաղաքներու երկրի սպայակազմ: Յետոյ էր թէ այս կարգաւորութեամբ պետութեան կարգն ու կանոնը աւելի պիտի ամրապնդուէր»: Պետութեան կազմի այս չորս ստորաբաժանները աւելի պայծառ եւ ճշգրտութեամբ հաղորդուած են Մ. Սորենացոյ անուամբ ծանօթ Աշխարհագրութեան հին օրինակներու մէջ. յառաջ կ'ը բերեմ Յ. Մարկուարտի վերակազմած ընդդէն (Eransahr, 8—9). ա. Քուստի Սորբարան, որ է կողմն Արեւմտայ, յորում են աշխարհք ինն...: Բ. Քուստի Նեմոզ, որ է կողմն միջաւրեայ, որ է հարաւ, յորում աշխարհք ինն եւ տասն...: Գ. Քուստի Սորասան, որ է կողմն արեւելից, յորում են աշխարհք իջ...: Դ. Քուստի Կապիտ, որ է կողմն Կապիտալից (արար. Արախտար, «հիւսիս», նաեւ «Ատրպատական»), յորում են աշխարհք թի...»: Արար եւ պարսիկ հեղինակներու տեղիքները տես Նöldeke, Tab., էջ 155—156, ծան. 2: Կը պատմէ Տարբի պուր (էջ 151) թէ Սոսրով թագաւոր ըլլալէն ետքը գրեց թղթեր այն չորս պաղտապաններուն, որոնցմէ իւրաքանչիւրը Պարսկաստանի չորս կողմերէն մէկը կը կառավարէր, եւ անոնց ընկերներուն (ստորակարգեալներուն): Եւ յառաջ կը բերէ Ատրպատականի պատգուապանին ուղղուած նամակին խորագիրը. «Կաւառի որդի Սոսրովին առ Չատոյէ, Նիւշապուհ (Nachwergän), պատգուապան Ապարպատականի, Հայաստանի եւ անոր սահմաններուն» եւն: Պատգուապան բառական թարգմանութեամբ «նահանգ»:

Հրովարտակին մէջ բացայայտ նշանակուած է նաեւ արշաւանքին նպատակակէտը. «խաղալ գնալ յաշխարհն Արեւելից»: Ճանապարհը Ապար աշխարհէն պիտի հանէր բանակը Վրկանից աշխարհը. նպատակաւ դիւրբ բռնելու «Հոնաց աշխարհի» սահմանին վրայ ընդ դէմ «Քուշանաց» (Հեփթաղաց): Այսպէս գիտէր նաեւ Ֆիրդուսի: Հետաքրքրական է հոս Հրովարտակին «աշխարհ Արեւելից» բացատրութիւնը «Վրկանից աշխարհի» համար, որ կ'ենթադրէ Պարսկաստանի այն նոր քաղաքական-գիտութեամբ բաժանումը, որ տեղի ունեցաւ Սոսրով Ա. Անուշուրուանի թագաւորութեան սկիզբը, երբ պետութեան ամբողջ հիւսիս-արեւելեան մասը՝ Վրկան աշխարհի հետ նկատուեցաւ Սորասան, այսինքն Արեւելից աշխարհ³⁰:

տանի հիւսիսային մասը, որ կը տարածուէր մինչեւ Վրկան աշխարհի սահմանները: Նահանգիս շահաստանն էր Նիւշապուհ, զոր կատուցած է Շապուհ Ա.: Շատ յաճախ նահանգին անուամբ յորջորջուած է շահաստանը եւ հակառակէն շահաստանի անուամբ նահանգը (Nöldeke, ZDMG. 31, 151. Marquart, Er., 74): այսպէս նաեւ հոս Ապար աշխարհով ակնարկուած է Նիւշապուհ:

Սոսրովի դահ բարձրանալէն յառաջ բանակին սպայակազմը (spahbeth), այսինքն վերին հրամանատարութեան պաշտօնը մէկ հողույ ձեռքն էր. իր այս պաշտօնը կ'ընդգրկէր ըզմանակ պետութիւնը: Երբ թագաւորեց Սոսրով, այս պաշտօնն եւ պատիւը չորս հողույ վրայ բաժնեց. այսինքն ա. Արեւելքի, այս է՝ Սորասանի եւ դրացի աշխարհներու սպայակազմ: Բ. Արեւմուտքի սպայակազմ: Գ. Նիւշապուհ, այս է՝ Եմենի սպայակազմ: Դ. Ատրպատականի եւ դրացի աշխարհներու, այն է՝ Սաղաքներու երկրի սպայակազմ: Յետոյ էր թէ այս կարգաւորութեամբ պետութեան կարգն ու կանոնը աւելի պիտի ամրապնդուէր»: Պետութեան կազմի այս չորս ստորաբաժանները աւելի պայծառ եւ ճշգրտութեամբ հաղորդուած են Մ. Սորենացոյ անուամբ ծանօթ Աշխարհագրութեան հին օրինակներու մէջ. յառաջ կ'ը բերեմ Յ. Մարկուարտի վերակազմած ընդդէն (Eransahr, 8—9). ա. Քուստի Սորբարան, որ է կողմն Արեւմտայ, յորում են աշխարհք ինն...: Բ. Քուստի Նեմոզ, որ է կողմն միջաւրեայ, որ է հարաւ, յորում աշխարհք ինն եւ տասն...: Գ. Քուստի Սորասան, որ է կողմն արեւելից, յորում են աշխարհք իջ...: Դ. Քուստի Կապիտ, որ է կողմն Կապիտալից (արար. Արախտար, «հիւսիս», նաեւ «Ատրպատական»), յորում են աշխարհք թի...»: Արար եւ պարսիկ հեղինակներու տեղիքները տես Նöldeke, Tab., էջ 155—156, ծան. 2: Կը պատմէ Տարբի պուր (էջ 151) թէ Սոսրով թագաւոր ըլլալէն ետքը գրեց թղթեր այն չորս պաղտապաններուն, որոնցմէ իւրաքանչիւրը Պարսկաստանի չորս կողմերէն մէկը կը կառավարէր, եւ անոնց ընկերներուն (ստորակարգեալներուն): Եւ յառաջ կը բերէ Ատրպատականի պատգուապանին ուղղուած նամակին խորագիրը. «Կաւառի որդի Սոսրովին առ Չատոյէ, Նիւշապուհ (Nachwergän), պատգուապան Ապարպատականի, Հայաստանի եւ անոր սահմաններուն» եւն: Պատգուապան բառական թարգմանութեամբ «նահանգ»:

Արքայից արքայի արշաւանքին նպատակն է «դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց»: Ինչպէս նկատեցինք վերը, Չ. դարու սուալին կէսին Պարսկաստան իւր հիւսիս-արեւելեան սահմաններուն վրայ միակ թշնամի ունէր Հեփթաղ տէրութիւնը: Տարբիւնակ է ըստ այսմ Հրովարտակին արտայայտութիւնը՝ «տէրութիւն Քուշանաց»: Քուշանները 468ին հետացած էին արդէն իրենց նախկին հայրենիքէն, թողլով զայն աւար Հեփթաղներուն: Ինչպէս այսմ արքայից արքայ անոնց յիշատակութիւնը կրնայ ընել: Կը յիշեմ պարսիկ Սուրհանդակին խօսքերը, ըսուած առթիւ Պերոզի պարտութեան լուրին. «ամենայն մարդ տեսանել լոկ սիրով չկարէր զայն Հեփթաղ եւ կամ զանուն լոկ լսել, թող թէ կուուել ընդդէմ Հեփթաղին» (Փարպ. 155): Իրօք ալ 485ին ի վեր ոչ մէկ պարսիկ համարձակած էր ոստի կանգնել Հեփթաղին: Այս էր թերեւս պատճառը, որ խոյս տուած է արքայն լսելի ընել Հեփթաղներու անունը: Եղիշէի ըմբռնումով ալ «Քուշանք» անունը աւանդաբար մնացած է այն աշխարհին վրայ, ինչպէս կը տեսնուի իր միւս, աւելի մեկին արտայայտութեանէն. «տէրութիւնն Հոնաց աշխարհին, զոր Քուշանս անուանեն», այսինքն ոչ Քուշաններու այլ Հոներու աշխարհ եւ տէրութիւն, որուն ժողովրդական յորջորջումն է Քուշանք:

Հեփթաղ անունն առ հասարակ ծանօթ է Եղիշէի. եւ այն ժամանակ, երբ նա գրի կ'առնէր իւր յիշողութիւնները, վաղ անհետացած էին այն աշխարհէն ինչպէս Քուշանները նոյնպէս Հեփթաղները, ուր Թուրքերն էին տէրերը: Ինչպէս Բիւզանդական հեղինակներու, նոյնպէս չին տարեգիրներու քով այս շրջանին իրբեւ ընդհանուր ժողովրդական անուն ծանօթ էր Սոնուու կամ λειουοι (Սոլուու) (Սպիտակ Հոնք, այսպէս կոչուած մորթի սպիտակութեան համար) եւ Hao

գալիս, կողմնապահ է. Նիւտրական 554ին կը յիշուի Ներսէս Առաքալիցոյ թղթին մէջ իրբեւ «ի մարգպատութեանն Նիւտրականայ» (Գիրք թղթոց, էջ 72), իսկ Յիզուրուզուտի վկայարանութեան մէջ «Հայոց իշխան, որ կոչէր Նիւտրական» (Վարք եւ վկայարանութիւնք Սրբոց, Բ, էջ 126): Ակնարկուած դաւան կամ մարդն են «հիւսիսային կողմանց» աշխարհները, Աղուանից, Վրաց, նաեւ Մարաստանի (Հմմտ. Nöldeke, 153, ծն. 19) հետ: Արեւմտեայ կողման պատգուապան կը յիշուի Տարբի 291 եւ Սեր. 77, 79 եւն Շահէն, որով կ'իմացուին Կարնոյ, Մեկիտինոյ եւն կողմանք (Սեր. 79): Հմմտ. առ այս Nöldeke, անդ, 151—152, ծ. 2:

(հոն), որով կ'իմանային ընդհանրապէս հիւսիսական ազգերը. իսկ մասնաւորապէս Հեփթաղ (Էփթալ, ʾΑβδητα, աս. Abdel, չին. Je-ta (հին արտասանութեամբ Jep-tat) կ'անուանէին աշխարհին տիրող ժողովուրդը (հմմտ. եւ Ղ. Փարպ. 146 եւն. Մ. Կաղանկ. 34 «Հեփթաղական ազգ»): Ըստ այսմ համաձայն է ժամանակին Եղիշէի բացատրութիւնը «տէրութիւն Հոնաց աշխարհի» որուն բացայայտին է միայն ընկալեալ անունն Քուշանք, հոս «Հեփթաղք» եւ քիչ յետոյ «Թուրքք» իմաստով: Դեռ է. դարուն Բ. կէսին Սերբոս Քուշանք, Թետաղք, Թետաղագիք, Հեփթաղք համազօր անուններ դիտէ, որով կ'իմանայ Թուրքերը³¹ (էջ 67 եւն):

Նոր արշաւանքս չի դիտեր արշաւել թշնամեաց երկիրը աւարարելու նպատակաւ, ինչպէս նախորդ երկու արշաւանքներու նպատակն էր, եւ ոչ ալ թշնամեաց յարձակում մը յետս մղել, այլ «գարձուցանել ի մեզ դտէրութիւնն Քուշանաց», հին վրէժ մը լուծել, յետս գրաւել այն երկիրները, որոնք Պերոզի եւ Կաւատի օրով յափշտակուած էին. վրէժառու կռիւ մը (Revanckekrieg): Յայսմ ձայնակից է Եղիշէին Տարարի, որ կը գրէ. «Սորով ետ ստացաւ Պարսկաստանի՝ շատ երկիրներ, որոնք ըստ մասին Կաւատ թագաւոր այլ եւ այլ պատճառներով եւ զանազան առիթներու մէջ կորսնցուցած էր եւ եւթարկած օտար թագաւորութիւններու»:

Այսպէս ճանչնալով յանձին արքայից արքայի՝ Սորով Ա. ի գէմքը, հասկնալի կ'ըլլան այնուհետեւ նաեւ հրովարտակին յոսորտ խօսքերը, յատուկ պարսկական մեծախօսութեան եւ Սորովի նկարագրին, թէ «առանց գործոյ պատերազմի» այսինքն առանց թշնամոյն հետ բախում ունենալու՝ «սիրով մարդասիրութեամբ (°) նուաճեցաք զամենայն երկիրն (Հոովմայեցոց) մեզ ի ծառայութիւն», ակնարկելով այն տուրքը, զոր գրած էր Հոովմայեցոց վրայ (545) իբրեւ պայման զինադադարի: Թէ ինչպէս շահագործեցին Պարսիկները 545ի զինադադարի եւ 562ի խաղաղութեան դաշինքի այս կէտը, որով Կայսրը յանձնատու կ'ըլլար տարեկան գումար մը վճարել ձորայ պահակին պահպանութեան համար, կը տեսնուի նաեւ այն

դէպքէն, զոր կը պատմէ Յովհ. Եփեսացի³². խօսելով Չեմարքոսի 572/73ին (ըստ Մեհանդրի՝ 569ին) դեսպանագնացութեան մասին կը պատմէ Եփեսացի, թէ Թուրքերու Սաքանը ի ներկայութեան պարսիկ դեսպաններու հարցուցած է Չեմարքոսին. «Ուղի՞ դէ Պարսիկներուն ինձ ըսածը, թէ Հոովմեական Կայսրը մեր քագաւորին (Սորովի) ծառան է եւ իբրեւ ծառայ մը՝ հարկ կը վճարէ մեզի»: Հոովմեական դեսպանը խոյս տուաւ ճարտարութեամբ հարցումէն եւ գտաւ հնարք ըրածը պահելու իւր Կայսեր ճոխութիւնը Սաքանին առջեւ: Բնականաբար ինչպէս կը սիրէր պարծիլ իւր զէնքի յաջողութիւններով արքայից արքայն, նոյնպէս պիտի փառաւորէին զինքը իւր հպատակները:

Նախարարները իրենց գունդերով կ'երթան կը ներկայանան թագաւորին, զորոնք ի մի գումարելով «խաղաց գնաց միանգամայն ի վերայ տէրութեանն Հոնաց աշխարհին, գոր Քուշանս անուանին. եւ գերկեամ մի կուտեալ, ոչինչ կարաց ազդել նոցա: Ապա արձակեաց գմարձիկսն յիւրաքանչիւր տեղիս. եւ գայլս ի նոցա տեղիս փոխանակ առ իւր կոչեաց նովին պատրաստութեամբ: Այսպէս ալ յամէ սովորութիւն կարգեաց. եւ իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց, սկսեալ ի Գ. ամէ տէրութեանն իւրոյ մինչեւ յամն ժԱ. քագաւորութեանն»:

Կ'երեւայ թէ Սորով փորձեց ի սկզբան յարձակումներ Հեփթաղներու վրայ, բայց մնալով ապարդիւն՝ անցաւ պաշտպանողականի: Նաեւ ըստ Ֆիրդուսիի աւագանոյն խորհուրդն էր՝ պաշտպանողական դիրքի մէջ մնալ, իբրեւ հանդիսատես սահմանէն անդին կատարուած անցքերու. բայց Սորով չէր անսացած:

Այս եւ յաջորդ հատուածին մէջ կու տայ մեզի Եղիշէ ժամանակագրական կուռաններ, զէպքերու ժամանակները որոշելու: Բայց արքայից արքայի Գ. եւ ժԱ. տարիները չեն համաձայնեցներ ճշդիւ այն զէպքերուն, որոնք պատմուած էին քիչ յառաջ: Ինչպէս հրովարտակը կը տարփողէր, այս առաջին արշաւանքը Քուշաններու դէմ, տեղի կ'ունենար Հոովմեական պատերազմէն անմիջապէս ետքը, այն է 543/44էն յետոյ, հաւանօրէն 545ին: Վերջին տարին կը համապատասխանէ

³² Յովհ. Եփես. Պատմ. Եկեղ. 2. 23 = գերմ. թարգմ., էջ 252:

ճշդիւ Սորովի թագաւորութեան ժԳ. տարւոյն: Լոկ պատահականութիւն մըն է որ այժմեան բնագրին Գ. տարին տասնաւորով մը աճեցնելով կը ստացուի 545 տարին: Որովհետեւ նաեւ ժԱ. եւ ժԲ. տարիները տասնաւորով աճած իմաստ կը ստանան, ստիպուած եմ ըսել, թէ Սկզբնազիրը խարդախուած է հոս խմբագրչի կողմէն մասնաւոր նպատակով մը: Սմբագրչի, որ Ղ. Փարպեցիէն փոխ կ'առնէր իւր տեղեկութիւնները Գ. արշաւանքի մասին, որպէս զի Ա.—Գ. արշաւանքներու ժամանակագրութիւնը համաձայնեցնէ Գ.ին, այն է Յազկերտի ժ2. տարւոյն, կարեւոր տեսած է Սկզբնազիրն «ԺԳ.—ԻԱ» եւ «ԻԲ» տարիները տասնաւորով մը նուազեցնել:

Վերականգնելով Սկզբնազիրը կը գտնեն Ա.—Բ արշաւանքները իրենց ճշգրիտ ժամանակագրութիւնը:

Ա. տարի կարգա՝ ժ. տարի թագաւորութեան Սորովի³³ = 540, Պարսկահոովմեական պատերազմի սկզբնաւորութիւնը:

Գ.—ժԱ. տարիներ կարգա՝ ժԳ.—ԻԱ. = 545—552. Ա. արշաւանք Քուշաններու (Հեփթաղներու) դէմ:

ԺԲ. տարի կարգա՝ ԻԲ = 553. Բ. արշաւանք Քուշաններու դէմ:

Ինչպէս չինական տարեգրիւնները կը վկայէին՝ 545, 552 եւ 554 տարիները հիւսիսական ազգերու պատմութեան մէջ կարեւոր թուականներ էին:

Թուրքերու յառաջախաղացութիւնը կը պահանջէր, որ Սորով պատրաստ հսկէր սահմաններուն եւ հետեւէր զէպքերու առած ընթացքին: Այս միջոցին (545—553) էր որ Թուրքերը նուաճելով Ուիգուրներու եւ Աւարներու աշխարհները հասան Հեփթաղներու տէրութեան սահմանները: Սորով օգտագործեց ժամանակը ամրացնելու իւր սահմանները վերահաս վտանգի առաջը: Այն երկար պարիսպները հիւսիս-արեւելեան սահմաններու վրայ, որոնց աւերակները դեռ այսօր կը տեսնուին, ըստ մեծի մասին բարձրացած էին Սորով Անուշըրուանի օրով³⁴:

³³ Սորով դահ բարձրացաւ 13 Սեպտ. 531:
³⁴ Տարարի (էջ 160) կը գրէ. «Այն թշնամիները, որոնք Վրկանի դիմաց կը բնակէին, Սորովի կառուցած պարիսպներու պատճառաւ չէին կրնար որ եւ է յարձակում փորձել այս երկրի վրայ կամ տիրանալ անոր»: Հմմտ. եւ R. Hartmann, յօդուածն «Վրկան» ի Zzyklopaedie des Islam, I, էջ 1112: Կը պատմեն Նաջուրի եւ Բերկրի թէ Սորով նման ամ-

Այս ամբողջութիւններու մասին պէտք է հասկնալ պատմագրին խօսքերը. «Եւ իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց³⁵», եւ «անդէն ի ներքոյ պահ դրանն արգելոյր գրագմութիւնն այրուածիցն Հայոց... եւ հրաման աստիւ ի վերայ դուռապանացն անէին, թէ որ յարեւիս առ մեզ գայցէ՝ թողցեն, իսկ յարեւելից յաւեւուտս՝ անանց լիցի քանապարհ: Եւ իբրեւ արգել եւ փակեաց գնոսա յամուր յանել գառագիղն, որ յիւրաքի ասացի ամուր եւ անել, քանզի չիք անդ տեղի փախըտի եւ քաֆաթի, վասն զի շուրջանակի բշնամիք են բնակեալ» (16—17):

545—552 շրջանին Սորով ունեցաւ անշուշտ ընդհարումներ թշնամոյն հետ. պատմագրին յետագայ տողերը «ի նեղ եւս էարկ գրագաւորն Հոնաց, քանզի աւերեաց գրագում գաւառս նորա» ակնարկութիւններ են այն փոքր եւ մեծ արշաւանքներու մասին, զորոնք սիրեց Սորով Հեփթաղաց աշխարհի վրայ: Մահարեւ հարուածը վերապահուած էր սալ յաջորդ տարին:

«Եւ իբրեւ ետես եթէ հաստատուն կացին Հոնումք յուխտին իւրեանց՝ գոր եղին ընդ նմա, եւ դադարեցին հայլընդուրք ելանել ընդ պահակն ձորայ, եւ յամեայն կողմանց խաղաղութեամբ բնակեաց աշխարհ նորա, ... եւ յաջողեցաւ տէրութիւնն նորա, աւետաւորս առաքեաց ընդ ամեայն ատրուշանս աշխարհին իւրոյ. ցումք ապիտակօք եւ գիւսաւոր նոխաօք առատացոյց գոռս կրակին» (11):

Աւելի Բ. արշաւանքին պիտի պատշաճէին տողերս, երբ Հեփթաղներու պետութեան կործանմամբ եւ Թուրքերու թագաւորին հետ բարեկամական յարաբերութիւն կնքուելով՝ Պարսկաստան իսկապէս «յամեայն կողմանց խաղաղութեամբ բնակեաց»: Բայց եւ այնպէս նաեւ 545—552 շրջանը անցաւ խաղաղութեամբ: Հոովմայեցիք որոնք

րութիւններ չինեց կամ ըստ մասնէ նորոգեց հիները նաեւ իրաքի սահմաններու վրայ Արարներու ասպատակութիւններէ պաշտպանելու համար երկիրը. հմմտ. Nöldeke, Tabari, էջ 160, ճ. 1: Քիչ ետքը պիտի տեսնենք թէ Սորով նաեւ ձորայ պահակ ամրացուց նոր շինութիւններով:
³⁵ Արար աշխարհագրիւնները կը յիշեն Նիւշապուր հաստատունէն երեք օր հեռու դէպի արեւմուտք Սորովակերտ (Khosrawgird) դաստակերտ մը Բայհակ բարբեր գաւառին մէջ. հմմտ. Tomaschek, Zur historischen Topographie von Persien, WSBAW, Phil.-hist. Kl., 108 (1885), էջ 636: Յայտնի է սակայն թէ Անուշըրուանի կերտուածքն է:

³¹ Հմմտ. Eranšahr, 61:

զբաղած էին արեւմուտք, չխախտեցին զինադադարը. եւ հիւսիսային սահմանը չվրդովեցաւ վազկատուն ցեղերու նոր ասպատակութեամբ ձորայ պահակէն, որովհետեւ այդ ցեղերը Թուրքերու հետ միութիւն կազմած՝ զբաղած էին Ուրդուրներու եւ Աւարներու դէմ եւ կը քայլէին Հեփթաղներու վրայ:

5. Խոսքովի յարձակումը Հեփթաղներու երկիրը: Այս անցքերու շարունակութիւնն է Բ. արշաւանքը, որուն ժամանակը կը նշանակուի «ի ԺԲ (կարգա՝ ԻԲ) ամի թագաւորութեան իւրոյ», այն է 553/54, երբ «գունդ կազմէր անհամար բազմութեամբ՝ յարձակեալ հասանէր յերկիրն ի Տաղական. գայս տեսեալ թագաւորին Քուշանաց, ոչ հանդարձէր Ելանել ընդ առաջ նորա պատերազմաւ. այլ խոյս տուեալ ի կողմանս ամուր անապատին, թագստեամբ ապրէր հանդերձ ամենայն զօրօքն իւրով: Իսկ սա ասպատակ արձակէր գաւառաց, տեղեաց, վայրաց. առնոյր զբազում բերդս եւ գաղաքս. կուտէր զգերին, գառ եւ գայառն եւ գաւար, ամէր հասուցանէր յերկիր իւրոյ տէրութեանն»: Արքայից արքայն արբած մեծ յաղթութեամբ, կը հարցնէ իւր պաշտօնեաներուն՝ մոզերուն եւ մոզպետներուն. «Ձինչ հատուցումք մեք աստուածոցն փոխարէնս (ընդ) այս(ր) մեծի յաղթութեանս. որ ոչ ոք կարաց Ելանել ընդդէմ մեր պատերազմաւ: Յայնմ ժամանակի առ հասարակ միաբան մոզք եւ քաղեայք բարձին զձայնս իւրեանց եւ ասեն. Աստուածքն՝ որ Ետուն քեզ գտէրութիւնդ եւ գլաղթութիւնդ) ի վերայ քշնամեաց քոց, ոչինչ կարօտ են խնդրել ի քէն յերեւելի պատուականացս...» (16):

Սուքը Հեփթաղներու պետութեան կործանման մասին է, որ տեղի ունեցաւ ճշդիւ 554ին³⁶: Հիւսիսէն թուրքերու՝ Սինջիբու Սաքանի եւ հարաւէն Սուրբուրու ճնշման տակ վերջ գտաւ Հեփթաղներու հզօր տէրութիւնը:

Այս կռիւներու մանրամասնութիւններու նկատմամբ կը խոստորին պատմագիրները իրարմէ. Տաբարի (էջ 159) կը գրէ. Սինջիբու (Σινζιβουλος ըստ Մենանդրի) սպաննեց Հեփթաղներու Վարդ թագաւորը. առանց վարնալու անոնց ուժէն ջախջախեց կոտորեց անոնց թագաւորին հետ բանակին մեծ մասը,

³⁶ Drouin, 286 «մերձաւորագլխ 557ին». բայց հմմտ. Marquart, WZKM, 9, էջ 184. Eranšahr, 64:

աւար առաւ անոնց ստացուածները, նուաճեց երկիրը, ի բաց առեալ այն մասերը, որոնք Սուրբուրի ձեռքն ինկած էին: Սաքանը սիրաչահեցաւ Արխաղ, Բանջար եւ Բարանջար ժողովուրդները, որոնք ենթարկուեցան իր իշխանութեան»: Մասուղի կը պատմէ թէ «Անուշարուան ասպատակութիւն սփռեց Բալխ գետի միւս կողմը, մինչեւ Սոտան, եւ եւ սպաննելով Հեփթաղներու Ախոշնաւաղ թագաւորը՝ լուծեց իւր պապին, Պերոզի վրէժը»: Ֆիրդուսիի համաձայն Հեփթաղները պատերազմի մէջ ինկած Ղանաֆար (Ղանաքար) թագաւորի տեղ ընտրեցին նոր մը՝ Ֆուղանիշ անուն³⁷. բայց թէ ի՞նչ եղաւ անոր բախար պատերազմէն ետքը՝ յայտնի չէ:

«Հեփթաղները իրենց պետութեան կործանումէն ետքը քաշուեցան դէպի արեւելք՝ Սոնտուզ, Բաղախշան եւ Յաքսարտէսի վերի կողմէն մտան Ֆերգանահ. ուրիշ մաս մ'ալ նստաւ Ոքսոսէն հարաւ, Թոխարխատանի մէջ, ուր խոռոչուեցան տեղացի ժողովրդեան հետ³⁸»:

Նշելի ստացած տեղեկութիւններու համաձայն Հեփթաղաց թագաւորը խոյս տալով թշնամոյն հարուածներէն փախած է «ի կողմանս ամուր անապատին»: Կարող է հոս «թագաւորով» նաեւ Ֆուղանիշ իմացուիլ, իսկ «ամուր անապատը» հաւանօրէն Սեւ աւազ (Կարա-Կուս) կոչուած անապատն է, որ դէպի արեւելք կը տարածուի:

Ուղիղ են եւ համաձայն արտաքին աղբիւրներու, ինչ որ կը գրէ Նշիշ Սուրբուրի յայն կոյս սահմանին կատարած ասպատակութիւններու եւ արշաւանքներու մասին. «Սուրբուր կ'երեւայ թէ յառաջացած էր մինչեւ Բալխ եւ Թոխարխատան, երբ Սինջիբու հիւսիսէն կը յարձակէր Հեփթաղներու վրայ» կը գրէ Նէօլդեկէ (159, ծ. 1): Այս իմաստով կ'ամփոփէ իւր տեղեկութիւնները նաեւ Տաբարի (էջ 156—158). Սուրբուր «ետ ստացաւ Պարսկաստանի՝ շատ երկիրներ, որոնք ըստ մասին Կաւատ թագաւոր այլ եւ այլ պատճառներով եւ այլ եւ այլ առիթներու մէջ կորսնցուցած էր եւ ենթարկած օտար թագաւորներուն. անոնց թուին մէջ են Սինդ, Բոսս, Արուխաճ, Չաբուխտան, Տոխարխատան, Դեհիստան, Քարուխտան: Մեծ կոտորած ըրաւ Պարիզ կոչուած ժողովրդեան

³⁷ Drouin, 285. Marquart, Eranšahr, 64:
³⁸ Drouin, 287:

մէջ. մնացորդներն հանեց իրենց երկրէն եւ տարաւ բնակեցուց իւր պետութեան այլ եւ այլ վայրերու վրայ, ուր անոնք ենթարկուեցան իր իշխանութեան եւ պատերազմող զինուորներ եղան: Ուրիշ ժողովուրդ մը, Չուկոչուած, բռնել եւ իր առաջ կոտորել տուաւ. խնայեց միայն 80 քաջ պատերազմողներու, զորոնք ապա Շահր ի Պերոզ բնակեցուց, պարտաւորելով որ զինուորական ծառայութիւն ընեն»: Ի հարկէ Տաբարիի (ինչպէս նաեւ պարսիկ եւ արաբ ուրիշ աղբիւրներու) թուած այս աշխարհներու նուաճումը ուղիղ չէ ըստ ամենայնի: «Եթէ ստուգուի գրաւած էր Սուրբուր Տոխարխատանը, ստիպուած էր դարձեալ պարսիկ Սինջիբու թուրքերու Սանին առջեւ, ինչպէս յետագայ դէպքերը ցոյց կու տան: Գոհ պէտք է ըլլար, որ Մարվիոտը կրցաւ միւսանգամ ձեռք բերել. Տաղականը դարձեալ սահման եղաւ: Կ'երեւայ թէ Հերաթ նահանգը Վատգէսի եւ Պուշանգի հետ յետոս նուաճած էր³⁹»:

Այս յաղթութիւններու մասին է ինչ որ Չիլի, Սուրբուրի զեսպանը 562ին կը պատմէր Յուստինիանոսին մեծարանելով թէ իւր թագաւորն Սուրբուր «անպարտելի է եւ տարած է շատ յաղթութիւններ. իր թագ կապելէն ի վեր տասը աղբերու հետ կոռուած եւ զանոնք հարկատու ըրած է, իսկ Հեփթաղներու իշխանութիւնը կործանած եւ շատ թագաւորներ ալ նուաճած է, եւ թէ այն աշխարհներու բարբարոսները կը յարգեն զինքը եւ կը պատուեն. ուստի եւ իրաւամբ եւ արժանեօք կը սեպհականէ անձին արքայից արքայ յորջորջանքը⁴⁰»:

Դեսպանին խօսքերուն հարազատութիւնը կը հաւատարմացնէ Նշիշ, որ հոս պարսկական մտայնութեան թարգմանն է: Յամենայն դէպս, եթէ Հեփթաղներու պետութեան կործանումը Սուրբուր առանձին ի գլուխ չհանեց, բայց այն ստոյգ է թէ ինքն ալ ունեցաւ մեծ մասնակցութիւն այս դործին մէջ եւ կրնար իրաւամբ աւետիս ուղարկել իւր ժողովրդեան եւ շնորհակալութեան ցոհեր սահմանել, վասն զի տարիներէ ի վեր Պետութեան անջատուած նահանգներ յաջողեցաւ յետոս գրաւել եւ որ մեծադոյն է՝ Պարսկաստան ազատեցաւ իւր ահաւոր թշնամիէն:

³⁹ Marquart, Eranšahr, 64—65:
⁴⁰ Մենանդր, էջ 354:

6. Խոսքովի արշաւանքը Թուրքերու դէմ: Թուրք-խուլվէական դաշնակցութիւնը: — Բայց Պարսկաստան Հեփթաղներու փոխարէն նոր թշնամի մ'ունեցաւ իրեն զբացի՝ Թուրքերը, որոնք ոչ նուազ վտանգաւոր էին: Թէպէտ ի սկզբան բարեկամական էին յարաբերութիւնները Պարսից եւ Թուրքաց մէջ, բայց դոյզն պատճառ մը բաւական էր պատերազմատէր եւ աւարատենչ զբացին գրգռելու անհաշտ թշնամութեան: Եւ Սուրբուր ամբարտաւան եւ անղիջող նկարագիրը տուաւ առիթ անհամաձայնութեան երկու պետութիւններու մէջ:

Թուրքերէն նուաճուած ժողովուրդները այնչափ չազդուեցան իրենց անկախութեան կորուստէն, որչափ այն վնասէն, զոր պատճառեց իրենց վաճառականութեան յարաբերութիւններու փոփոխութիւնը⁴¹: Սուրբուր օրէնքները արտասահմանեան ապրանքներու ներածութեան մասին անհնարին դարձուցին անոնց՝ մետաքսի չահարեր վաճառականութեան աշխոյժ ընթացք տալ: Սաքանը⁴² անոնց խնդրանքին վրայ դեսպանութիւն մը զրկեց Սուրբուրին՝ Սոգդիացի Մանիաքի գլխաւորութեամբ, բանակցելու մետաքսի ազատ առեւտուրի մասին: Սուրբուր տրամադիր չէր զիջել, բայց չէր ուզեր նաեւ մերժելով իւր հզօր զբացուոյն հետ խղել բարեկամական յարաբերութիւնները: Թուրքաստանէն փախստականի մը՝ Կատուրիոսի խորհրդով զնեց Սուրբուր պատգամաւորներու բերած մետաքսը եւ անոնց աչքին առջեւ այրեց զայն: Իմացան պատգամաւորները, թէ ինչ ուղեց ասով յայտնել Սուրբուր եւ վերադարձան տփգոհ: Երկրորդ դեսպանութիւն մ'աւելի արդիւնաւոր չեղաւ. եւ որովհետեւ այս դեսպանութեան անդամներէն շատերը մեռան Պարսկաստան, համբաւեցին թուրքերը, թէ անոնք թունամահ եղան, թէ եւ պարսիկները կը հաւատէին, թէ կլիմայի ազդեցութիւնն էր անոնց մահուան պատճառը: Սաքանը չէր

⁴¹ Այս խնդիրներու մասին հմմտ. Fr. Spiegel, Eranische Altertumskunde, III, էջ 452—453. E. Chavannes, Documents sur les Tou-kiue (Turcs) occidentaux, էջ 226—245 եւ Ernst Stein, Studien zur Geschichte des byzantinischen Reiches. Stuttgart 1919, էջ 17—21 եւ 35—36:

⁴² Ինչպէս Մենանդրի պատմութեան ընթացքէն կը տեսնուի, խօսքը Արեւմտեան թուրք պետութեան Սաքանի, Դիզաբուլի (Διζαβούλιος, չին. Ծէ-թիէ-մի, թրք. Իսէթիէ) մասին է, որ կը գտնուէր Սինջիբու մեծ Սաքանի գերիշխանութեան տակ. հմմտ. Marquart, WZKM, 12, էջ 188:

ուզեր սակայն համոզուել: «Ասկէ սկիզբ առաւ թշնամութիւնը Պարսից եւ Թուրքերու մէջ» կը գրէ Մենանդը (էջ 297):

Դիզարուլ հետտես քաղաքականութեամբ մը կը խորհէր այժմ Պարսից դէմ դաշնակցութիւն մը կնքել Կայսեր հետ: Հաւատացած էր, թէ ինչպէս քիչ յառաջ Թուրք պարսկական միաբանութեամբ հնարաւոր եղաւ կործանել հելլիսթալական պետութիւնը, նոյնպէս այժմ Թուրք-հռոմէական դաշնակցութեամբ կարելի պիտի ըլլայ ջախջախել պարսկական հզօր տէրութիւնը: Դաշնակցութեամբս պիտի բացուէր նաեւ Թուրք եւ Թրքահայտակ ժողովուրդներուն կերպասի առեւտուրի լայն շուկայ մը. իսկ հռոմէացիները պիտի ազատէին պարսկական երկամտի մենաշնորհէն, որուն համար գուր տեղ ջանք թափած էր Յուստինիանոս:

Պաքանի այս ծրագիրը, զոր ղեկավարութիւն մը Սոզոմենի բանակայ Մանեաքի ղլխաւորութեամբ կու գար ներկայացնել Կայսեր, յուսարի էր թէ ուրախութեամբ պիտի ընդգրկուէր Յուստինոսէն: Եւ իրօք ալ ի սկզբան սիրով փարեցաւ Կայսրը այս մտքին. բայց ժամանակի քաղաքական պարագաները չէին ներքէն համագործակցութեամբ ի գլուխ հանել զայն: Սակայն եւ այնպէս չուզեց Կայսրը բոլորովին լքել իրեն ներկայացուած առաջարկութիւնները. պէտք էր նաեւ ի մերձուստ ճանչնալ նոր բարեկամները, որոնց անունն անգամ լսուած չէր մինչեւ այն ատեն Բիզանդիոնի մէջ: Այս պատճառաւ ալ 569 Աւգոստոսին, երբ կը մեկնէին Թուրք ղեկավարները, Կայսեր կողմէն ընկերացաւ անոնց հռոմէական ղեկավարութիւն մը, որուն գլուխն էր Չեմարքոս Արեւելեան բանակի սպարապետը: Երկար եւ յոգնեցուցիչ ուղեւորութեամբ հասան անոնք Եկատազ (Ալտայի) ուր էր Դիզարուլ Պաքանի արքունիքը: Եւ որովհետեւ ճիշդ այս միջոցին Դիզարուլ պատրաստուած էր չուէր Պարսից դէմ, Չեմարքոս ընկերացաւ բանակին: Ծանապարհին թէ Չեմարքոս եւ Դիզարուլ ինչ համաձայնութեան եկան եւ երկուստեք ինչ պարտաւորիչ որոշումներ կայացան, ծանօթ չէ մեզի. պետական հաղորդագրութիւններէ այսչափ զիտենք միայն, որ Պաքանը բարեկամական հաւատախնդրով արձակեց Չեմարքոս, ուղեկից տալով իրեն Թրքական երկրորդ ղեկավարութիւն մը, մինչդեռ պարս-

կական ղեկավարութիւն մը, որ չուէր ընթացքին եկած ներկայացած էր իրեն՝ մերժուած էր հռոմէական ղեկավարին ներկայութեան:

Անշուշտ ի Տիզարոն լաւ տպաւորութիւն չթողուց այն լուրը, թէ Կայսեր կողմէն Չեմարքոս Պաքանի հետ բանակցութեան մէջ է: Դժուար չէր կուսել թէ ինչ մանած կը մանէին անոնք: Մանուածքը խղելու միակ միջոցը նկատուեցաւ հռոմէական ղեկավարութիւնը Կ. Պոլիս չհասած մէջտեղէն անհետացնել: Այս նպատակով փորձեցին պարսիկները կաշառել Ալանները, որպէս զի երբ ճոն հասնին ուղեւորները, դարձնամուտ ըլլան անոնց կեանքին: Բայց Ալանները ոչ միայն յանձն չառին իրենց եղած առաջարկը, այլ եւ զգուշացուցին հռոմէացիները այն վտանգի առաջ, որ կը սպառնար անոնց Պարսիկներէն Սուանիայի մէջ: Չեմարքոս նման փորձանքէ մը ազատած էր նաեւ Կուսա ղեկավար Քով Ուտիգուրի մը ազգարարութեամբ: 571ին հասան վերջապէս ողջամբ Կ. Պոլիս հռոմէացի եւ Թուրք ղեկավարները:

Սկսան այժմ աշխոյժ երթեւեկութիւններ բարեկամական նկարագրով Թուրքերու եւ հռոմէացիացի մէջ: 571—575 տարիներէն ծանօթ են մեզի ոչ նուազ քան 5 ղեկավար-ղեկավարներ Կայսեր կողմէն Թուրքերուն. ի Կ. Պոլիս կազմուած էր նոյն իսկ Թրքական փոքրիկ գաղութ մը այն մարդկանէ, որոնք ընկերացած էին վերադարձող հռոմէական ղեկավարներուն: Թերեւս 571ին կնքուած ըլլայ կերպական դաշնակցութիւն մը Կայսեր եւ Թրքական այս երկրորդ ղեկավարութեան միջեւ. բայց, ինչպէս կ'երեւայ, շատ մեծ գործնական նշանակութիւն մը չունեցաւ այն:

Հռոմէական-թրքական այս բարեկամութեան միակ գործնական արդիւնքն այն եղաւ, որ արքայից արքայի եւ Կայսեր մէջ յարաբերութիւնները լարուեցան: Թէպէտ Պոստոլ կը բաղձար խաղաղութիւնը, բայց Յուստինոս իւր յոյսերը դրած դաշնակից Թուրքերու վրայ կը սպասէր պատեհ ժամուն յարձակելու Պարսից վրայ⁴³:

⁴³ Մենանդը (էջ 311) 572ի պատերազմի առթիւ կը գրէ. «Հռոմէական եւ պարսկական պատերազմի սրբէ շատ պատճառներ կային. մասնաւորապէս Թուրքերը շատ կը թախանձէին Կայսրը, որ Պարսից դէմ դուրս գայ: Իրենք Թուրքերը (այս միջոցին) արշաւած էին Մարաստան եւ քանգած աւերած. եւ զրկած էին Յուստինոսին ղեկավարութիւն մը, որպէս զի ինքն ալ միաժամանակ յարձակուած գործէ Պարսից վրայ, վստահացնելով որ այսպէս պիտի յաջողի ջախջախել իրենց հետեւը»:

Դեպքանագնացութեանց մասին այս մանրամասնութիւնները կարելի էին ըմբռնելու համար արեւելքի քաղաքական կացութիւնը 570/71ին: Յաջորդ հատուածին մէջ պիտի անդրադառնանք անոր միւսանգամ: Այժմ կը հետաքրքրէ զմեզ Չեմարքոսի ղեկուցման այն կէտը, թէ ինքը 570/71ին հանդիպած է Արեւմտեան Թուրքաստանի Դիզարուլ Պաքանին ճիշդ այն պահուն, երբ նա կ'արշաւէր Պարսից դէմ⁴⁴: Ուստի Պաքանին եւ արքայից արքայի անհամաձայնութիւնը փոխուած էր արդէն թշնամութեան եւ պատերազմը հրատարակուած: Պոստոլի ղեկավարութիւնը, որ ճանապարհին ներկայացած էր Պաքանին, անշուշտ յանձնարարութիւն ունէր խաղաղութեան պայմաններ առաջարկել Պաքանին, որոնք սակայն մերժուեցան:

Ահա Դիզարուլի յառաջխաղացութեան⁴⁵ լուրի վրայ էր, որ Պոստոլ այրեւծին հապճեպ ճանապարհ կը հանէ եւ ինքն անձամբ դէպի սահման կ'աճապարէ:

Կը գրէ Եղիշէ. «Ի նմին ժամանակի գուժկան հասանէր ի կողմանցն Բուշանաց, եթէ գուրդ հատաւ ի քշմամեացն, որ էլին աւերեցին զգաւառս բազումս արճունի: ... Եւ անօրէնցն (Պոստոլ) մեպեալ տագնապէր գայրուճին յառաջ արձակել, եւ ինքն փութով ստէպ գիտո երթայր. եւ ի խոր խոցեալ ի խորհուրդսն (այս. զխորհուրդսն)՝ ցրուէր գաւառքին հաստատուան երդումն» (Բ. 37—38):

Գիտէ նաեւ Մենանդը⁴⁶, թէ 570/71ին Թուրքերը Մարաստան ասպատակած եւ մարդաթափուր ըրած են աշխարհը (տե՛ս այս մասին §. 26):

Պոստոլի բախումն թշնամուցն հետ անփառունակ եղած է պարսկական գէնքի համար. վասն զի ինչպէս կը գրէ պատմագիրը «ՅԱրեւելից պատերազմէն կորակոր եւ ոչ բարձրագուլի էր դարձեալ» (63):

Զախել հասարակաց թշնամին. այսինքն մէկ կողմէն Հռոմէացիք եւ միւս կողմէն Թուրքերը յարձակուած գործելով պիտի կարենան իրենց մէջ տեղ գտնուած Պարսիկները խեղդել: Այս յոյսերէն որոշուած Յուստինոս այն մտքի վրայ էր, թէ իրօք զերին պիտի ըլլայ հարուածել Պարսից իշխանութիւնն եւ ի կործանումն բերել: Այս մտածմունքով ամէն ջանք կը տանէր, որպէս զի սիրաշահի Թուրքերու բարեկամութիւնն եւ վստահութիւնը:

⁴⁴ Մենանդը, էջ 383, սպ. Բոննի. καὶ ὁ Ζήμαρ-γος οὖν τῷ Διζαβούλῳ ἐπορεύετο μαχησομένῳ Πέρσας: «Եւ Չեմարքոս խաղաց գնաց ընդ Դիզարուլից, որ ի մարտ պատերազմի երթայր ի վերայ Պարսից»:
⁴⁵ Հմմտ. եւ Տարսիք, էջ 157—160:
⁴⁶ Մենանդը, էջ 311:

Եղիշէ անորոշ կ'արտայայտուի ժամանակի մասին՝ «ի նմին ժամանակի»: Բայց դժուար չէ ստուգել զայն: Չեմարքոսի մեկնումը Կ. Պոլսէն ըստ Մենանդրի տեղի ունեցաւ Յուստինոսի Դ. տարւոյն սկիզբը, Աւգոստոսին: Յուստինոս գահ բարձրացած էր 565 Նոյեմբեր 14ին. ուստի ղեկավարներու մեկնումն է 569 Աւգոստոս: Տարբեր են Յովհ. Եփեսացոյ տեղեկութիւնները⁴⁷. ասոնց համաձայն ղեկավարութիւնը ճանապարհ ելաւ Յուստինոսի Է. տարին, այն է 572/73 եւ վերադարձաւ երկրորդ տարւոյն, ուստի 573/74: Ուղղագոյն կը համարեմ Մենանդրի տեղեկութիւնները⁴⁸: Չեմարքոս որ 569 Աւգոստոսին մեկնած էր, հասաւ Պաքանին առանց տարակուսի 570ի մէջերը. եւ վերադարձաւ 571ի ամառը: Այս ժամանակագրութեան համաձայն են նաեւ Եղիշէի տեղեկութիւնները: Պոստոլ տակաւին Գուշաններու (Թուրքերու) հետ պատերազմի մէջ էր, երբ Հայաստան կը պատրաստուէր ասպատակութեան (571). անշուշտ Չեմարքոսի վերադարձէն վերջը կայացաւ այս որոշումը: 572 Փետ. 2ին սպանուեցաւ Սուրէն Գունի մէջ: Սուրհանդակը, որ կ'երթար գուժելու Թագաւորին այս բոթը, գտաւ զանիկա «ի տեղի ձմերուցին» (63). ուստի 572ին, զարնան դռներու բացուելէն յառաջ:

Այս տարի, ինչպէս կ'երեւայ, Պոստոլ ձմերած էր Վրկան աշխարհի մէջ⁴⁹, որովհետեւ ի լուր Հայաստանի անցքերուն կը գոչէր սարսափահար. «մեք դեռ եւս ի հեռաւոր քանապարի եւ ոչ մի ինչ գործ ի պատերազմիս ի գլուխ ելեալ» (63):

Մասանեան հզօր արքայն ըմբռնեց քաղաքական հորիզոնին յանկարծական փոփոխութեան պատճառը: Մուսլ ամպեր կիտուեցան իր աչերու առջեւ. որուն մասին կը կասկածէր, այժմ իրականացած տեսաւ: Հայկական ասպատակութեան լուրը «շարժեալ դողացոյց» գինքը, «որ եւ յամենայն գորութեանն պակասեալ գտաւ... խոնարիե-

⁴⁷ Յովհ. Եփեսացի, 2, 23. գերմ. Թարգմ., էջ 253—255:
⁴⁸ Թուրքերու այս արշաւանքի ժամանակագրութեան մասին տե՛ս նաեւ վարը՝ աստղաբաշխական երեւոյթի մեկնութիւնը:
⁴⁹ Թերեւս ի Պոստոլակերտ, նիւշապուսէն երեք օր հետո, կառուցուած բարերը եւ օգտուն միջաւայրի մէջ (հմմտ. վերը ծան. 35): Պոստոլ Բ. ի սովորական ձմերուցը կը գտնուէր ի Մահոզէ (Սելեուկիա, Տիգրիսի եզերքը)՝ ուր արքայն ըստ իւր սովորութեան կ'անցնէր ձմեռը. Hoffmann, Auszüge, 93:

ցաւ ի բարձր հայարտութեան... հայեցաւ եւ ետես զինքն լի տկարութեամբ, գիտաց եթէ զամենայն՝ գոր կամի, անել ոչ կարէ» (64—65) : Գիտէր լաւ, թէ Հայերը իրենք իրենց, առանց դուրսէն զբողոքելու, չէին կրնար մտաբերել ի վտեր գալ իր իշխանութեան դէմ : Հռովմայեցոց մատը տեսաւ այս ապստամբութեան մէջ, որ յայտնաբարբառ ապացոյց մըն էր, թէ Հայերը դաշինք կնքած թուրքերու հետ, կը պատրաստուի քրիստոնեայ Հայաստանի պաշտպան հանդիսանալու պատրուակով՝ յարձակում գործել իր վրայ :

«Պարսիկները զգացին իրենք զիրենք թրքական եւ հռովմէական պետութիւններու մէջ տեղը նման կացութեան մէջ, ուր երբեմն դատուած էին Հեփթաղները թուրքերու եւ Պարսիկներու մէջ տեղ ⁵⁰» :

Ո՛րչափ ճշգրիտ կը մատնանչէ Եղիշէ ըստէի իսկական քաղաքական կացութիւնը եւ Պարսկաստանի ճգնաժամային վայրկեանը, երբ կը դնէ արքայից արքայի բերանը խօսքերս : «Տեսէք զի ետուք գործել ինձ գոր ինչ ոչ կամէի. եւ եղես ՎեճԱՄՔ ՄԵՆԱՄԵՆՔԻ Ի ՍԱՀՄԱՆՍԵ Ի ՄԷՋ ԵՐԿՈՒՅ ԱՆՀԱՇՏ ԹՇՆԱՄԵՆՍ... եւ դուք աստէն յիմում տանս յարուցէք ի վերայ պատերազմ, որոյ չարագոյն լինելոց է կատարածն իւր քան զարտաքին թշնամեացն» (65) :

Որո՞նք են արքայից արքայի երկու անհաշտ թշնամիները, որոնց «ի մէջ» կը գլուխուին իր պետութեան սահմանները. ի՞նչ են այն «միասը մեծամեծք» ⁵¹ :

Սոսրով զեռ չէր հաստատած խաղաղութիւնն արեւելեան սահմաններու վրայ, երբ Հռովմայեցիք եւ թուրքերը կնքեցին զինակցութիւն Պարսիկներու դէմ, երբ Հայաստան ապստամբեցաւ :

Որովհետեւ Հռովմայեցիք զեռ չէին յայտարարած 562ի խաղաղութեան դաշինքը լուծուած, Սոսրով 572ին, դարնան ուղարկեց քրիստոնեայ Սերուխը իրեն զեսպան Կայսեր, պահանջելու ժԱ. տարւոյն տուրքը՝ բայց յերականին իր դադունի նպատակն էր

⁵⁰ Spiegel, անդ, էջ 453 :
⁵¹ Հմմտ. Յովհ. Եփեսացի, 2. 23. Երբ Սաքանը Չեմարքոսի գրգռութեամբ դառնացած արձակեց Սոսրովին իրեն ուղարկուած դեսպանները, եւ անոնք զացին պատմեցին իրենց թագաւորին թէ Սաքանին քով հռովմէական դեսպաններու պատահած են, «Վրդովեցաւ եւ դառնացաւ» Սոսրով եւ «իմացաւ թէ Հռովմայեցիք իրեն դէմ կը զբզոն բարբարոս ժողովուրդները, այսու իրենց ճոխութիւնը բարձրացնելու համար» :

լրտեսել Կայսեր տրամադրութիւնը, յատկապէս թէ ի՞նչ զերք պիտի բռնէ հանդէպ հայկական ապստամբութեան. «վասն զի ի սկզբանէ անտի կասկածոտ էր Սոսրով, եւ կը զգար թէ Կայսրը այնու որ խաղաղութեան պայմաններու կատարումը կը յապաղէ, կը միտի պատերազմի» ⁵² : Այս դեսպանագնացութիւնն ալ ծանօթ է Եղիշէին. զա՛յս կը մատնանչէ երբ կը գրէ. «Ինքն գաղտ խորամանկեալ՝ փութացեալ դեսպանս առաքէր առ Մարկիանոս (իմա՛ Յուստինոս) Կայսր» (66) :

Սոսրով չէր ուզեր իւր ծերութեան օրերուն պատերազմ. այս պատճառաւ Սերուխտ ամէն ջանք տարաւ մեղմով արտայայտուել Կայսեր. բայց Յուստինոս որոշած էր պատերազմ :

Այս տեղ կ'ընդհատին Եղիշէի խօսքերը Պարսիկ եւ թուրք յարաբերութիւններու մասին :

ՅԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հիւսիսական ազգերու՝ Հեփթաղներու եւ թուրքերու դէմ մղուած պատերազմներու այս պատկերը, դժուած ժամանակակից աղբիւրներու լուսով, յուսով ենք թէ ընդունեցաւ իւր շրջազիծի մէջ ճշգրիտ եւ տեսանելի կերպով այն իրողութիւնները, որոնց պատմիչն է Եղիշէ : Կրնանք ուրեմն այժմ ամփոփել մեր ուսումնասիրութեան եզրակացութիւնը :

1. Եղիշէի «Քուշանաց» կամ «Հոնաց աշխարհը» կը համապատասխանէ 480—554 շրջանին համար Հեփթաղաց աշխարհին, իսկ 554—590 շրջանին համար թուրքերու պետութեան :

2. Յաղկերտ Բ.ի արչաւանքները Քուշանաց դէմ, մղուած 449էն յառաջ եւ 454ին, կապ չունին Եղիշէի յիշած Ա.—Բ. արչաւանքներուն հետ : 454ի արչաւանքի պատմութիւնը, պատմուած Ը. յեղանակին մէջ, փոխառութիւն է Ղ. Փարպեցիէն :

3. Եղիշէի Ա.—Է. յեղանակներու «արքայից արքայն» է Սոսրով Ա. Անուշիրուան :

4. Ա.—Բ. արչաւանքները, մղուած «Քուշանաց» դէմ արքայից արքայի Գ.—ԺԲ. տարիներուն, պէտք է իմանալ Սոսրովի ԺԳ.—ԻԲ. տարիներուն (545—554) Հեփթաղներու հետ ընդհարումները :

⁵² Մենանդը, էջ 313—314 : Հմմտ. Stein, անդ, 24—25 :

ՍԵՊԱԳՐԱԿԱՆՔ

ՀԱԹԵՐ ԵՒ ՈՒՐԱՐՏԵԱՆՔ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն) :

9. — Այս տեղ պէտք է յիշատակել քանի մը հայերէն գրուածքներ, որոնք կապ ունին նախընթացներուն հետ, թէեւ իբր հայերէն գրուածքներ՝ յետոյ պիտի յիշուէին ուրիշ հայերէն գրութեանց շարքին մէջ : Նախ՝ նշանակենք Արտ. Արեղեանի գրուածքը, որ հրատարակած է տեսութիւն մը Յ. Կարստի գրութեանց մասին, ի մասնաւորի անոր այն գրութեան՝ որ հայ լեզուի ուսումնասիրութեանց պատմութեան կը վերաբերի եւ որ՝ ինչպէս տեսանք՝ կը կրէր խորագիրս՝ «Պատմութիւն հայ բանասիրութեան» : Ասկէ եղած են նաեւ քաղուածքներ եւ յատկապէս յառաջ բերուած են հայերէն լեզուի եւ իւր բարբառներու մասին այն նորանշան եզրակացութիւնները, զորոնք մանրամասնօրէն ծանօթացուցինք արդէն մեր ընթերցողաց (§ 4 եւն) ¹⁶⁷ :

Աւելի ընդարձակ ծրագրով է երկրորդ գրութիւնն՝ Ա. Սաֆրաստեանի, որ հայ ցեղի ծագման խնդիրը կ'ուզէ ուսումնասիրել, պարունակելով նաեւ զանազան մատենագիտական տեղեկութիւններ ¹⁶⁸ : Այս տեղ նկատողութեան առնելու պէտք չկայ առաջին մասն՝ Հայաստանի Քարաղարու մասին տեղեկութիւններով. այլ միայն երկրորդը՝ որ Սոսրովի կամ Սարի (Հուրրի, Հարրի) աշխարհի եւ անոր հետ կապուած խնդրոց մասին :

¹⁶⁷ Արտ. Արեղեան, «Հայագիտութիւնը Անցիւլում եւ Ներկայում (ըստ Պրոֆ. Կարստի) : (1. Ուսուցչական Կարստի վերջին աշխատութիւնը : — 2. Հայերէնի լեզուապատմական գիրքը : — 3. Բարբառային բաժանումներ եւ լեզուական փուլեր : — 4. Ստուգարանութիւն : — 5. Չայնախօսութիւն) : Լոյս տեսած՝ «Հայրենիք» ամսագիր, Թ. Տարի, 1931. Թ. 8, էջ 147—153. — Թ. 9, էջ 151—156. — Թ. 10, էջ 127—139 : — Ի նկատի առնուած է յատկապէս՝ J. Karst, Geschichte der armenischen Philologie etc. Heidelberg 1930 (տես վերը) : — Այս առթիւ յիշենք այն կարճ՝ բայց խիստ ըննադատութիւնը, որ լոյս տեսած է Յ. Կարստի ուրիշ գրութեան մը մասին (Հմմտ. E. Forrer, ի «Caucasica», fasc. 8, 1931, p. 151—152) :

¹⁶⁸ Արչակ Սաֆրաստեան, «Հայ ցեղի ծագման խնդիրը» : ԲԶՄ, 1931, Թ. 3, էջ 109—114. — Թ. 5, էջ 208—213 («Հայաստանի քարաղարը») : — Թ. 6, էջ 254—258 («Սոսրովի եւ Սուրբարու») եւն : (Շարունակելի : Հմմտ. § 10.)

5. Գ. արչաւանքը, տեղի ունեցած 571ին, մղուած է թուրքերու հետ Արեւելեան սահմանին վրայ :

6. Եղիշէի ծանօթ են 569—572 տարիներու թուրք-հռովմէական եւ պարսիկ-հռովմէական դեսպանագնացութիւնները :

7. Եղիշէ գիտէ Հռովմէական-թրքական դաշնակցութիւնը կամ «միաբանութիւնը» 570/72ին (Հմմտ. § 26) :

8. Այս դէպքերու ժամանակագրութեան համար ամուր կուտան հայթայթած է ինքնին Եղիշէ յիշատակելով 571ի աստղներու երևումը «լուսալիր պայծառացեալ» եւ նոյն շրջանին տեղի ունեցած երկրաշարժը (Հմմտ. § 27) :

Իրբեւ աներկբայ իրողութիւն ներկայացընելով եզրակացութիւնս, չեմ կրնար չյայտնել զարմանքս թէ ի՞նչպէս E. Drouin եւ J. Marquart, նաեւ Th. Nöldeke, որոնք այնպէս վկայեալ տեղեկներ էին 545—572 տարիներու հիւսիսական ազգերու եւ դրացի պարսիկ պետութեան քաղաքական յարաբերութիւններու մասնը եւ մեծ էլեւէջներուն, չեն կարողացած անդադառնալ Եղիշէի պատմութեան հարազատ իմաստին եւ յարած կանխակալ կարծեաց՝ շարունակած են օգտագործել զայն իրբեւ «ժամանակակից» աղբիւր Ե. դարու պարսիկ-ըռւշանական յարաբերութիւններու համար : Կը լուծ խօսիլ տոհմիկ այն «պատմաբաններու» մասին, որոնք կը ննջեն խորաքուն նաեւ այն ժամանակ, երբ այերք կ'որոտան եւ աշխարհս երերի մէջ է :

Եթէ դարեր այսպէս կարողացած եւ այսպէս ըմբռնած էին Եղիշէ, այժմ նոր արչաւոյսի տակ նոր աղբիւր մը կը բղխէ նոյն գետնէն, Զ. դարու յեղափոխ ժամանակներու այնպէս կարեւոր պատմութեան համար : Թէպէտ սակաւաջուր է, թէպէտ պղտոր կը հոսէ տակաւին աղբիւրը, բայց եւ այնպէս թանկագին են անոր մէջ մի կաթիլները, գուշակող ակնաղբիւրին իսկական համն ու արժէքը :

Այս լուսով լուսաւորուած, այս ջուրով կազմուրուած շարունակներ մեր պեղումները :

(Շարունակելի) : չ. Ն. ԱՊԻՆՍԱՆ